Եթե Նիկոլն ասում է՝ կրթություն, գիրք, դպրոց, նշանակում է՝ քաղաքացու գործերը վատ են լինելու. դպրոցները փակվելու են, դասագրքերը փչացնելու են: Օրինակ, Փաշինյանն ասաց, չէ՞, որ աղքատության պատճառն «ավերակ» դպրոցներն են: Այդպես էլ եղավ՝ Ազգային կրթության խորհուրդը որոշեց, որ պետք է 231 դպրոց փակվի:

Կարդացեք՝ էջ 4

Այս տարի ընտրակաշառքները կբաժանվեն օրենքով սահմանված կարգով: Գումարները կփոխանցվեն քաղաքացիների բանկային քարտերին, որ «տասովչիկները», հանկարծ, դրա մեջ փող չաշխատեն: Այս նորարարությունն առաջինը կփորձարկվի թոշակառուների վրա: Ապրիլի 1-ից հետո, այսինքն՝ ապրիլի 3-ին կամ 4-ին, նրանք հաճելիորեն կզարմանան:

Կարդացեք՝ էջ 5



Կրակոցներով, մահերով ավարտվող դեպքերի թիվը տարեցտարի աճում է: 2025-ին՝ 2024-ի համեմատ նման հանցագործությունների աճը շուրջ 40 տոկոս է եղել, 2024-ին էլ 2023-ի համեմատ է աճ գրանցվել: Հարց է ծագում՝ ինչո՞ւ: Հիշենք՝ ով էր բարձր ամբիոններից ահաբեկում մարդկանց՝ «ասֆալտին կփռեմ, պատերով կտամ» բառապաշարով:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 27 (4162), 26 փետրվար, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Նիկոլ Փաշինյանի «հատիկ առ հատիկ» հեշթեգի տրամաբանության մեջ գործող գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հերթական հայցադիմումն է ներկայացրել դատարան, այս անգամ՝ ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանին պատկանող, Սեւանում գտնվող «Հարսնաքար» համալիրի վերաբերյալ: Հայրապետյանի եւ նրա ընտանիքի դեմ մեկ այլ հայց էլ կա՝ ենթադրյալ ապօրինի գույքերը բռնագրավելու պահանջով, որն այժմ դատաքննության փուլում է: Հետաքրքիր է, որ «Հարսնաքարի» դրվագն առանձնացրել են, եւ գույքը խլելու հայցը ներկայացվել է «Հարսնաքար» ՍՊԸ-ի եւ ոչ թե Ռուբեն Հայրապետյանի դեմ: 2,5 ամիս առաջ, երբ Աննա Վարդապետյանը կառավարության նիստում հայտարարեց, թե ուսումնասիրության արդյունքում պարզել են, որ «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի եւ մի իրավաբանական անձի միջեւ 2002 թվականի դեկտեմբերի 2-ին կնքվել է 2.8 հա հողամասի վարձակալության պայմանագիր, եւ դատախազությունն առաջարկում է այդ պայմանագիրը լուծել ու հողամասի վրա առկա գույքերն օտարել «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին, խոսքը հենց «Հարսնաքարի» տարածքի մասին էր: Իսկ թե ինչպես են հողի անօրինական օտարման հիմքով թանկարժեք գույքը, բիզնեսը սեփականատիրոջից խլում, դա երեւի միայն Վարդապետյանին է հայտնի:

Արցախի Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանը, որ վերջերս ասել էր, թե հունիսի 7-ին սպասվող խորհրդարանական ընտրություններին մասնակցել-չմասնակցելու մասին կհայտարարի մարտի կեսերին, իրականում ցանկություն չունի մասնակցելու դրան: Նրա մտերիմներից մեկը մեզ հետ մասնավոր զրույցում անկեղծացավ, որ Սյամոն լավ գիտի, որ ինքն ընդունելի չէ ո՛չ արցախցիների, ո՛չ հայաստանցիների շրջանում, սակայն եթե «խնդրեն», որոշեն, որ ինքը պետք է խաղի մեջ մտնի՝ որոշակի խոստումներ տան հետագայի հետ կապված, ապա չի մերժի: Վաղարշապատի ընտրություններին նրա մասնակցությունը շոշափելի արդյունք չբերեց, եւ քաղաքական դաշտում հասկացան, որ Կամանդույուշչին, եթե անգամ որպես անհատ կշիռ ունի, ապա էլեկտորալ առումով՝ չունի: Իհարկե, խնդրելը եւ խաղի մեջ մտցնելը ենթադրում են նաեւ ֆինանսական աջակցություն՝ նախընտրական ծախսերի հարցում:

Ականավոր հիշեցը

Ես չգիտեմ՝ կամ արդյոք որեւէ երկրում «ականավոր հիշեցի» կոչում, բայց ես նման կոչում կշնորհեի Նիկոլ Փաշինյանին, որը զբաղված է այստեղ-այնտեղ ծագող հրդեհները մարելով, քանի որ պետական կառավարման ճգնաժամի ու այս համատարած քաոսի պայմաններում ստիպված է անընդհատ իրավիճակային հարցեր լուծել, ինչ-որ քայլեր ձեռնարկել՝ պարբերաբար ծագող դժգոհությունները մարելու համար, եւ խարխափելով՝ գնալ դեպի ընտրություններ կոչվող փորձություն: Ահա՝ փորձում է հանգցնել քրեածին իրավիճակից առաջացող հանրային դժգոհությունը եւ հերթական սպանությունից ու կրակոցներից հետո միանգամից ոստիկանապետի 3 տեղակալ է ազատում աշխատանքից՝ անտեսելով կադրային լուրջ դեֆիցիտը եւ ոլորտային մասնագետների պակասը: Մի քանի օր կադրային տեղաշարժերը կգբաղեցնեն մարդկանց, մի քանի շաբաթ էլ հույս կներշնչեն, որ իրավիճակը կկարգավորվի: Ահա՝ հապճեպ ու չպլանավորված քայլի է գնում՝ 5-10 հազար դրամով բարձրացնում է կենսաթոշակները՝ դրանով նաեւ օրենքը խախտելով: Ի վերջո, երկրի բյուջեն օրենք է, եւ եթե այդ օրենքում 2025-ի դեկտեմբերին չեն նախատեսել նման քայլ ու միջոցներ, ապրիլից նման բանի գնալը խոսում է ծայրահեղ անհրաժեշտության եւ «հրդեհի» մասին, որը մարելու համար դիմում է նման էքստրեմալ միջոցի: Ահա՝ հուսով է, որ նախկինների եւ Մարտի 1-ի գործով էլ կկարողանա մի քիչ ռեյտինգ բարձրացնել, մի քանի ձայն ավել քերել մեր խեղճ ու մոլորված ժողովրդից, եւ մեղադրանք է առաջադրվում Փաշինյանի նախկին նախարարին՝ Վալերի Օսիպյանին, եւ նախկին ոստիկան Ռոբերտ Մելքոնյանին, ու հանկարծ հիշում են Հովհաննես Թամամյանին, որը նախկինների ժամանակ դատապարտվել է 4 տարի ազատազրկման, ապա վաղաժամկետ ազատ արձակվել: Էլ ի՞նչ հնարք ունի պահած Փաշինյանը՝ ընտրություններին ընդառաջ:

Անցած կիրակի՝ Սեւան քաղաքի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում Փաշինյանի մասնակցությամբ պատարագից հետո, որի ընթացքում չէր զեղչվել Ամենայն հայոց կաթողիկոսի անունը, Փաշինյանի թիմում շփոթված են՝ ոչ մի կերպ չեն հասկանում. արդյոք «շեֆը» ձեռքերը լվացե՞լ է Եկեղեցու եւ Վեհափառի դեմ արշավից, թե՞ դադար է վերցրել «մեծ պատերազմից» առաջ եւ չի ուզում ընտրող կորցնել: ՔՊ-ի ներսում հակված են նրան, որ առնվազն հրադադար կկնքվի այս փուլում, եւ կսպասեն խորհրդարանական ընտրությունների արդյունքներին, որից հետո, եթե հունիսի 7-ին իրենք հաղթեն, հարցն ինքն իրեն կլուծվի, եւ Վեհափառն ինքնակամ կհեռանա: Իսկ այս փուլում արշավը շարունակելը կարող է իրենցից ձայներ տանել, ուստի պետք է դադար առնել. խորհրդարանական ընտրություններից առաջ Եկեղեցու դեմ արշավը միայն վնասում է իրենց վարկանիշին:

ԶԻՆԱՆՇԱՆՆ ՈՒ ԴՐՈՇԸ՝ ԿԻՑ ԳՐՈՒԹՅԱՄԲ

Օրեր առաջ տեղեկացրել էինք, որ ԿԳՄՍ նախարարությունը գրություն է ուղարկել դպրոցներ՝ պահանջելով հեռացնել արցախյան պատերազմներում անմահացած հերոսների փառքի անկյունները: Երկու տարի առաջ կրկին նման տեղեկություններ տարածվեցին, սակայն գործընթացը կանգ առավ՝ հանրության բարձրացրած աղմուկից հետո: Այժմ կրկին տնօրեններին հրահանգված է՝ երեխաների հետ Արցախի թեմայով որեւէ զրույց, հիշատակում չանել եւ հեռացնել փառքի անկյունները: Տնօրեններից մեկը մեզ մանրամասնեց, թե կոնկրետ ինչ բովանդակության գրություն են ստացել՝ ԿԳՄՍՆ-ից հորդորել են փառքի անկյուններից արցախյան պատերազմներում զոհվածների նկարները հանել եւ միայն թողնել Հայաստանի զինանշանն ու դրոշը՝ կից գրությամբ. «Լավ սովորիր, որ լավ ապրես»: Իշխանությունները, փաստորեն, հիշատակի արժանի չեն համարում հայրենիքի համար իրենց կյանքը տված տղաներին: Գործընթացն իրականացնելու պատասխանատվությունը դրվել է մարզպետների վրա, քանի որ, ասում են՝ որոշ տնօրեններ ընկրկում են, ամաչում են այդ ապազգային որոշումն ինքնակամ կատարել:

ԹՈՉԱԿԱՌՈՒՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՎԱՏ ԵՆ ԱՊՐՈՒՄ, ԻՍԿ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՔՊ ՎԵՐՆԱԽԱՎԻՆ

Հարցազրույց
Հրանտ Բագրատյանի
հետ

- Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն ամեն օր ֆեյսբուքյան գրառումներ է անում՝ ցուցադրելով, թե ինչպես է բարելավվել տնտեսության վիճակը՝ 2017 թվականի համեմատ: Օրինակ, նա պնդում է, որ Հայաստանի ՀՆԱ-ն 2025 թվականին եղել է 7,2 տոկոս, 2017-ի համեմատ աճել է 2,5 անգամ՝ 11,5 մլրդ դոլարից հասնելով 29,2 մլրդ դոլարի: Եթե այսպիսի

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

մեծ տարբերություն կա, եթե տնտեսությունն այսքան արագ աճում է, ապա ինչո՞ւ բնակչությունն իր մաշկի վրա չի զգում այդ զգալի աճը:

- Նախարարի ասածը (եթե դուք չեք սխալվել հարցը տալիս) իրականության ու տնտեսագիտական գրագիտության հետ կապ չունի: ՀՀ ՀՆԱ հավելաճը 2025թ., 2017-ի համեմատ (8 տարի), կազմել է 52.7% կամ միջին տարեկան 5.4%, խոստացած 7%-ի փոխարեն: 2.5 անգամ աճ չկա: Նշենք, որ 2010-2017 թթ. (նորից 8 տարի) ՀՆԱ հավելաճը կազմել է 37%, իսկ 2001-2008 թթ. (նորից 8 տարի)՝ 126.6%: Հիմա՝ դոլարային արտահայտությամբ աճի մասին: 2025-ին, 2017-ի համեմատ, դոլարն էժանացել է 68%-ով (ներառյալ դոլարի արժեզրկումը դրամի նկատմամբ 25%-ով): Եթե նախարարն այսքան գիտելիք ունենար եւ 29.5 մլրդ-ից հաներ 68%-ը, ապա կստանար վերը նշված նույն՝ 50.7 տոկոս ՀՆԱ հավելաճը: Առաջ անցնելով ասենք, որ այդ բոլոր աճերը մենք վերցրել ենք այս իշխանությունների պաշտոնական վիճակագրությունից՝ խաղերի ու զվարճությունների առաջանցիկ «զարգացման» պայմաններում:

- 1 շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը, ըստ էկոնոմիկայի նախարարի, 2017 թվականին եղել է 3 հազար 869 դոլար, իսկ 2025 թվականին՝ 9 հազար 474 դոլար, այսինքն՝ այս ցուցանիշը եւս աճել է ավելի քան 2,5 անգամ: Բայց բնակչության կենսամակարդակը չի աճում, աղքատությունն ավելանում է, եւ այդ մասին, ինչպես հիշում ենք, ասել է վարչապետը՝ անցյալ տարեվերջին: «Մենք ցույց ենք տալիս, մի կողմից, տնտեսական աճ, փողի մեծ շրջանառություն Հայաստանի Հանրապետությունում, բայց մենք աղքատության էական նվազում չենք ունենում»: Նա բացատրում էր այս երեւույթը դպրոցների ավերակ լինելով, Դուք ինչո՞վ եք բացատրում:

- 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն 2017թ. իրոք կազմել է 3 հազար 869 դոլար (Համաշխարհային բանկի տվյալներն են՝ https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD): 2025թ. դրանք համադրելի գներով եղել են 5 հազար 620 դոլար եւ 8 տարում աճել են սոսկ 1.45 անգամ (պետք է նկատի ունենալ, որ այդ ընթացքում, պարոն Պապոյանի կառավարության հայրենանվեր գործունեության արդյունքում, Արցախը դատարկվել է, եւ 120 հազար մարդ տեղափոխվել է ՀՀ): 9 հազար 474 դոլար թիվն ընթացիկ թիվ է եւ ներառում է դոլարի արժեզրկումը: Կարճ. նախարարի համեմատությունը գրագետ չէ, իրենից ներկայացնում է էժան մանիպուլյացիա: Նշենք նաեւ, որ առաջին հերթին խաղերի ու զվարճությունների հաշվին ստացված տնտեսական աճը ոչ մի աղերս չունի բնակչության կենսամակարդակի հետ: Եվ իրոք, եթե որպես աճ ընդունենք իմ կողմից շտկված թվերը, ապա, միեւնույն է, առկա է բնակչության կենսամակարդակի չնչին աճ (թոշակառուներն ու գյուղացիներն ավելի վատ են ապրել, չնչին բարելավում կա բյուջետային ոլորտում եւ նկատելի բարելավում՝ տնտեսության մասնավոր հատվածում): Այստեղ էլ պիտի նշենք, որ բարելավումը հիմնականում վերաբերում է ՔՊ կուսակցության վերնախավին:

- Ըստ նախարարի, հայկական ծագման ապրանքների արտահանումը, 2017 թվականի համեմատ, կրկին 2,5 անգամ ավելացել է՝ մոտ 2 մլրդ դոլարից հասնելով 4,5 մլրդ դոլարի, եւ սրա մեջ չկան վերաարտահանում, ոսկի, պլատին: Միեւնույն ժամանակ, ըստ նույն վիճպետկոմի, Հայաստանից արտահանման ծավալները 2025 թվականի 11 ամսում՝ հունվար-նոյեմբերին, նվազել են 40.6 տոկոսով: Սա ինչ հակասություն է:

- Նախ, 2017թ. արտահանման ծավալները եղել են 2.24 մլրդ դոլար, իսկ 4,5 մլրդ-ն 2.24-ից մեծ է մոտ 2 անգամ: Դժբախտաբար, ՀՀ ԱՎԾ-ն համադրելի գներով արտահանման ծավալների հաշվառում չի անում, որպեսզի դատողություններ անենք արտահանման ծավալների իրական աճի մասին: Ինչպես է նախարարը հաշվել 4,5 մլրդ-ն՝ չեմ կարող պատասխանել:

- Արտադրողականությունն է ավելացել, ըստ նրա, 6 դոլար մարդ/ժամից հասնելով 11 դոլարի: Նա աճը բացատրում է նրանով, որ մեր բիզնեսները 1,5 մլրդ դոլարից ավելի մեքենասարքավորումներ են ձեռք բերել, որոնց հաշվին բարձրացել է արտադրողականությունը: Բայց մենք գիտենք, որ հարկային կոշտ քաղաքականության պատճառով բազմաթիվ բիզնեսներ՝ փոքր եւ միջին, ուղղակի փակվում են: Էդ դեպքում ո՞ւմ արտադրողականությունն է կառավարությունը հաշվել:

- Արտադրողականությունն ավելացել է նույն այն տրամաբանությամբ, ինչը նշել ենք 1-ին հարցին պատասխանելիս: Դրա 68 %-ը դոլարի արժեզրկման արդյունք է: Իրականում, 8 տարում արտադրողականությունն ավելացել է սոսկ 32 %-ով եւ 2017թ. գներով կազմել է 7.92 դոլար (հանել ենք դոլարի արժեզրկումը եւ հաշվի ենք առել զբաղվածների շուրջ 150 հազար մարդ աճը): Նաեւ նշենք, որ բոլոր դեպքերում գրանցվել է ցուցանիշների համեստ աճ՝ զգալիորեն ավելի քիչ, քան Վրաստանում, Թուրքիայում, որոշ ցուցիչներով՝ նաեւ Ադրբեջանում: Շատ ավելի քիչ, քան 2000-ական թվականներին այդ նույն Հայաստանում:

ԿՈՂՔԻՑ ՆԱՅՈՂԸ ԿՄՏԱԾԻ՝ 10 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐԻ ՄԱՍԻՆ Է ԽՈՍՔԸ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԴՐԱՄԻ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երեկ ՔՊ-ական ուսապարկերը, իրար հերթ չտալով, հայտարարում էին, որ երջանկացրել են հայ թոշակառուներին՝ թոշակը մի ամբողջ 10 հազար դրամ ավելացնելով: Բայց անգամ այս հարցում ազնիվ չեն, չեն ասում, որ այդ 10 հազար դրամը բոլորը չեն ստանալու (հարաբերականորեն՝ բարձր թոշակ ստացողները, իսկ Հայաստանում 80 հազար դրամն առավելագույն թոշակ է, եթե մարդը նախկին զինվորական կամ դատավոր-դատախազ չէ): Այդ 10 հազարը հազիվ մի 70 հազար մարդ է ստանալու՝ 600 հազարից: Վարչապետ Փաշինյանը կարծում է, թե թոշակառուներին հնարավոր է 10 հազար դրամով խաբել, եւ հայտարարում է. «Սիրելի հայրենակիցներ, ուրախ եմ հայտարարել, որ Հայաստանում ապրիլի 1-ից կենսաթոշակները կբարձրանան: Ընդ որում, համեմատաբար ցածր կենսաթոշակները կբարձրանան 10 հազար դրամով, ավելի բարձրերը՝ ավելի քիչ: Այս հաշվարկների մեջ չկա անկանխիկ առեւտրից ստացվող հետվճարը, այսինքն՝ կենսաթոշակները բարձրանում են իմ նշած սանդղակներից ավելի շատ: Հետվճարն արդեն առանձին հաշվարկ է, որի մասին բազմիցս խոսել ենք»: Այս որոշումը պայմանավորված է մի քանի գործոնով. «Հայաստանում տնտեսական աճը 2025 թվականին եղել է կանխատեսվածից ավելի բարձր, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից կանխատեսվածից, եւ սա լրացուցիչ հնարավորություն է ստեղծում, որ քաղաքացիները տեսնեն այդ աճի արդյունքն իրենց կյանքում: Հունվարի 1-ից ներդրված առողջության համապարփակ ապահովագրության համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ բյուջետային հատկացումները բավարարում են կարիքները հոգալու համար»:

«Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար **Մեսրոպ Առաքելյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Ինչ վերաբերում է թոշակների բարձրացմանը, ապա, այո, այն պետք է բարձրացվեր ավելի շատ, քան 10 հազար դրամը, մենք վաղուց ենք խոսել մեր պատկերացրած կենսաթոշակի չափի մասին, այն նվազագույն սպառողական զամբյուղի չափով է, մոտ՝ 80 հազար դրամի չափ: Այն թոշակառուին գոնե հնարավորություն կտա իր նվազագույն ծախսերը հոգալ: Այժմ ինչ անում է այս իշխանությունը, հերթական նախընտրական քայլն է: Բյուջեի հաշվին անում են այն, ինչ պետք է անեին վաղուց, ու այնպես են ներկայացնում, կարծես իրենց գրպանից են այդ գումարները տրամադրում: ՔՊ-ից էլ մարդ չմնաց, որ չխոսեր այդ մասին, անկախ այն բանից՝ կապ ունե՞ն ոլորտի հետ, հասկանո՞ւմ են ոլորտից, թե՞ ոչ: Ակնհայտ է, որ այս ամենն ունի քարոզչական նպատակ: Բյուջետային քաղաքականության տեսանկյունից նման ծախսերը նախատեսվում են տարեսկզբից՝ նախորդ տարվա բյուջեի հաշվարկներով պայմանավորված: Այժմ չկա որեւէ հիմնավորում: Վերջին ամիսների ցինիկ խոսույթը՝ պարգեւավճարների հետ կապված, վստահաբար, թոշակառուների մոտ եւս բացասական ընկալում է առաջացրել, ու հիմա ստիպված փորձում են մեղքերի թողություն կատարել եւ փոքրիկ գումարներով սիրաշահել թոշակառուներին, սակայն թոշակառուներն անպայման կհասկանան, որ ժամանակավորապես 10 հազար դրամը շատ ավելի փոքր արժեք ունի, քան այն աղետները, որոնք պետք է բերեն Հայաստանի գլխին: Թոշակառուն ունի արժանապատիվ թոշակ ստանալու իրավունք, եւ չի կարելի նրան օգտագործել նախընտրական փիառի տեսանկյունից: 10 հազար դրամ թոշակի ու, առհասարակ, Հայաստանի թոշակի մասին պետք է ամոթով խոսեն, այլ ոչ թե հպարտանան: Այնպիսի աղմուկ են բարձրացրել, որ կողքից նայողը մտածի՝ 10 հազար դոլարի, այլ ոչ թե դրամի մասին է խոսքը»:

Ընդամենը մի քանի շաբաթ առաջ նպաստառուների նպաստի հաշվարկման փոփոխություններ կատարեցին, եւ իշխանությունն ամեն ինչ անում է, որ նպաստառուների թիվը պակասի, ինչպե՞ս է ստացվում, որ նպաստառուի մասին չեն մտածում, թոշակառուի մասին մտածում են: «Այո, նպաստների համակարգում արվող փոփոխությունները բերում են նաեւ անարդարությունների, իհարկե, կան նպաստառուներ, ովքեր ստացել են նպաստ՝ դրա կարիքը չունենալով, սակայն քիչ չեն նաեւ նրանք, ովքեր, ունենալով դրա կարիքը, զրկվել են գումարից: Աղքատությունը Հայաստանում շարունակում է բարձր մնալ, եւ շատ ընտանիքներ իսկապես դրա հաշվին են ապրում: Պաշտոնական վիճակագրությունը եւս փաստում է դա: Երբ աղքատությունն ամենաբարձր մակարդակի վրա է, անընդունելի է, երբ ասվում է, թե մարդիկ նպաստի կարիք չունեն: Շատ հաճախ ընտանիքի աղքատ լինելու հանգամանքն ինչ-որ մի գործոնով համապատասխան չափանիշներին չի համապատասխանում, այնպես որ, շեշտը դրա վրա դնելը սխալ է ու անընդունելի»:

ԹՈՇԱԿ

ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ՝ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՎՃԱՐԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ

Անցած 5 տարիներին ՀՀ քաղաքացիների կյանքը տարատեսակ հարկեր-տուրքերով բարդացրած իշխանություններն ընտրություններից հաշված ամիսներ առաջ անցել են «հետողորմյայի ռեժիմի»: Արդեն տեղեկություններ են շրջանառվում, որ շուտով գույքահարկի, աղբահանության, տրանսպորտի, կարմիր գծերի ու տեղական տուրքերի վճարների թանկացումների մասին որոշումները հնարավոր է չեղարկվեն, քաղաքացիների համար գործեն նախկին սակագները: Երեկ էլ Փաշինյանն անձամբ «ավետեց», որ ապրիլի 1-ից կենսաթոշակների ու նպաստների բարձրացում է սպասվում:

Այն դեպքում, երբ ընդամենը մեկ ամիս առաջ հայտարարում էր. «Եթե մենք, օրինակ, 10 հազար դրամով բարձրացնենք թոշակը, միեւնույն է, խնդիրները չեն լուծվելու»: Փաշինյանը համոզում էր, որ թոշակը թեկուզ 10 հազար դրամով բարձրացնելը ոչ մի իմաստ ու նշանակություն չունի: Ասում էր՝ նախ, դա այն գումարը չէ, որ թոշակառուի կյանքում բան փոխի, բացի դրանից, ըստ Փաշինյանի՝ թոշակառուն չգիտի, թե ինչ անի այդ 10 հազարը, որտեղ ծախսի: Հիմա հայտարարում է թոշակների ու նպաստների բարձրացման մասին, ինչը նշանակում է, որ իշխանության տեղն այնքան նեղ է, որ ստիպված է պետական միջոցներից ոչ թե ինքն իրեն պարգեւավճար տալ, այլ, իրենց տրամաբանությամբ՝ «քամուն տալ», միայն թե գոհացնի թոշակառուներին եւ նրանց քվեն ստանա առաջիկա ընտրություններում: Պատահական չէ, որ թոշակի այս բարձրացումը նախատեսում են ապրիլի 1-ից անել, այսինքն, մայիսին՝ ընտրություններից ընդամենը մեկ ամիս առաջ, թոշակառուների կյանքը 10 հազար դրամով հեշտացնելով, թերեւս, հույս ունեն հունիսի 7-ին իրենց էլեկտորատը համալրել թոշակառուներով: Սա ոչ այլ ինչ է, քան պետական միջոցներով ընտրակաշառք բաժանել: Մենք տեղեկացանք նաեւ, որ մարզպետներին է հրահանգված՝ մարզպետարաններին հատկացվելիք բյուջեի «սոցիալական աջակցության» գումարները չխնայել նախընտրական ամիսներին, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, դիցուք, վերջերս 1 միլիոն դրամ է բաժանել մոտ 3 տասնյակ ընտանիքի:

Փաստորեն, Նիկոլ Փաշինյանն ու իր խմբակը, որ քննադատում են այլոց սեփական միջոցներով նախընտրական աջակցության դրսեւորումները, ծաղրում Ծառուկյանի «տուկի թել», Արթուր Բաղդասարյանի «մուրաբաներ» օպերացիաները կամ ՀՀԿ-ի 5-10 հազարական դրամով քվե առնելը, այսօր զբաղված են դասական ընտրակաշառքի գործով, մի տարբերությամբ՝ դա անում են ոչ թե իրենց գրպաններից, այլ մեր՝ բոլորիս հարկերից ձեւավորված պետական բյուջեից:

Առաջիկա ամիսներին, անկասկած, պետական բյուջեի հաշվին ընտրակաշառքի այլ դրսեւորումներ էլ կլինեն, իշխանության հետ կապվող հիմնադրամների միջոցով ակցիաներ կանեն, տարբեր սոցիալական ծրագրեր ու դրամաշնորհներ կբաշխեն: Փոխարենը իրավապահ մարմինները խոշորացույցի տակ են վերցրել ընդդիմադիրների գործունեությունը եւ հատկապես՝ բարեգործական հիմնադրամների, քանի որ Քրեական օրենսգրքում ծածուկ մի քանի հոդված են ներմուծել, որը հնարավորություն է տալիս ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի հետ այս կամ այն կերպ առնչություն ունեցող բարեգործական հիմնադրամների գործողությունները նախընտրական փուլում վերագրել առաջադրվող ուժերին եւ քրեական վարույթներ հարուցել:

Ընտրական օրենսգրքով՝ հանրապետության նախագահի կողմից ընտրությունների նշանակման պահից սկսած, այն կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են ասոցացվել ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումների հետ, կամ որոնք ղեկավարվում են այդ կուսակցությունների կողմից, մինչեւ ընտրության արդյունքների ամփոփումը չեն կարող բարեգործություն անել: Այս արարքը ենթադրում է 3-6 տարի ազատազրկում: Օրենքի այս կետն իշխանությունները հատկապես որպես մահակ են գործածում Սամվել Կարապետյանի եւ Գագիկ Ծառուկյանի գլխին, որոնց անվան հետ կապվող բարեգործական հիմնադրամները տարիներ շարունակ աջակցություն են ցուցաբերել քաղաքացիներին, Սամվել Կարապետյանի դեպքում՝ որեւէ քաղաքական ակնկալիք չունենալով:

Մի քանի շաբաթ է՝ իշխանությունն ու ընդդիմությունը բարեգործության արգելքի խախտումների համար փոխադարձ մեղադրանքներ են հնչեցնում: Իշխանականները պնդում են, որ բարեգործության արգելքը խախտել են գործարար Սամվել Կարապետյանի թիմից՝ մոտ 100 ուսանողի խոստանալով վճարել 1 տարվա ուսման վարձը: Փոխարենը՝ վարչապետի կին Աննա Հակոբյանի ղեկավարած «Իմ քայլը» հիմնադրամը գրասենյակներ է բացում հանրապետությունով մեկ, արտերկիր գործուղումներ է ուղարկում, օրերս էլ 30 հոգու անգլերենի դասընթացների է հրավիրել, բայց դա խախտում չեն համարում ոչ ՔՊ-ում, ոչ էլ իրավապահ մարմինները: Առաջինի դեպքում ուսումնասիրություններ են սկսել, երկրորդի դեպքում, ինչպես Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Արթուր Նահապետյանն է երեկ լրագրողներին ասել, հաղորդում չի ներկայացվել:

Ակնհայտ է, որ իրավապահներն առաջիկա ամիսներին դառնալու են Փաշինյանի ձեռքում գործիք՝ բացառապես ընդդիմության դեմ են աշխատելու եւ իշխանությունների ակնհայտ խախտումների վրա աչք են փակելու, իսկ ընդդիմադիրներին ճնշելու են ամենաաբսուրդ մեղադրանքներով: Մանավանդ որ իշխանության ջրաղացին ակտիվ ջուր են լցնում քաղհասարակություն կոչվող հատվածի «անաչառ» էքսպերտները, որոնք վայրկենական հաղորդումներ են ներկայացնում իրավապահ մարմիններին՝ ընդդիմադիրների հետ կապված, իսկ իշխանության բացահայտ ապօրինությունների եւ հանցավոր գործողությունների վրա աչք են փակում: Միայն մի օրինակ բերենք՝ «Հայրենիք» կուսակցության անդամ, գիտությունների դոկտոր Խաչիկ Գալստյանը շուրջ երկու ամիս է՝ կալանքի տակ է միայն այն պատճառով, որ Էջմիածնի ընտրությունների ժամանակ ընտրական շտաբի անդամին գումար է տվել, որ ուտելիք առնեն՝ ընդմիջում անեն:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆ ԱՌԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ, ՕՐԱԿԱՐԳ Է ԹԵԼԱԴՐՈՒՄ

Երեկ Նիկոլ Փաշինյանն անձամբ տեղեկացրեց, որ ապրիլի 1-ից թոշակները կբարձրանան: Նա իր Facebook-յան էջում էր գրել այդ մասին, նաեւ տեսանյութ հրապարակել՝ մասնավորապես նշելով. «Սիրելի հայրենակիցներ, ուրախ եմ հայտարարել, որ ապրիլի 1-ից կենսաթոշակները Հայաստանի Հանրապետությունում կբարձրանան: Ընդ որում, համեմատաբար ցածր թոշակները կբարձրանան 10 հազար դրամով, համեմատաբար բարձր թոշակները կբարձրանան ավելի քիչ»:

Սա, իհարկե, լրիվ տեղավորվում է նախընտրական լեգիտիմ ընտրակաշառքի թեմաների շրջանակում, սակայն հարց է առաջանում՝ ի՞նչ միջոցներից են կատարում այդ բարձրացումը, եթե 2026 թվականի պետական բյուջեն 2025-ի վերջին հաստատվել է, եւ այնտեղ նման բան նախատեսված չէ, ու գումարները, ինչպես ասում են, բյուջեի մեջ դրված չեն, իսկ ընդամենը մեկ ամիս առաջ նույն Փաշինյանն ասում էր, որ թոշակի բարձրացում հնարավոր չէ, նաեւ անիմաստ է. այդ 10 հազարը տարեցների կյանքում ոչինչ չի փոխի, եւ նրանք չեն իմանա, թե այդ գումարն ինչպես ծախսեն:

Փորձեցինք աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից ճշտել, թե մեկ ամսում այդ ինչ նոր աղբյուրներ գտնվեցին, եւ որտեղից են վերցնելու 600 հազար անձի կենսաթոշակը բարձրացնելու միջոցները: Սոցապնախը մեզնից գրավոր հարցում պահանջեց, դիմեցինք ֆինանսների նախարարություն, այնտեղից էլ պատասխանեցին՝ վճարվելու են 2 աղբյուրից. «Պահուստային ֆոնդի միջոցներից եւ հավելյալ միջոցներից: Հաշվի առնելով, որ 2025 թվականի մեր հարկերի կատարողականը բարձր է եղել, քան սպասում էինք 2026-ի բյուջեն կազմելիս, կունենանք հավելյալ եկամուտներ: Նախատեսվում է, որ բավարարելու են բարձրացմանը»: Ֆիննախից նշեցին նաեւ, որ այս նախագիծն աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության տիրույթում է:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ **Հայկ Ֆարմանյանը**, «Հրապարակ»-ի հետ զրույցում անդրադառնալով ապրիլի 1-ից կենսաթոշակների բարձրացմանը, ասաց. «Իրենք հայտարարել են, որ կենսաթոշակառուների մինիմալ կենսաթոշակն են բարձրացնելու 10 հազար դրամով, նվազագույն կենսաթոշակ ստացողների թիվը կազմում է մոտավորապես 73 հազար մարդ: Ամենագլխավոր խնդիրն այստեղ այն է՝ երբ կենսաթոշակների մասին խոսք էր լինում, իրենք ասում էին՝ կենսաթոշակառուն ծախսելու ձեւը չգիտի, 20-30 հազարով եթե բարձրացնենք, այդ սոցիալական խնդիրները չեն լուծվելու: Ու բանից պարզվում է, որ ապրիլին իրենք այդ քայլը նախաձեռնում են: Ես հարցադրման ձեւով կասեմ՝ կարելի՞ է ենթադրել, որ սա այլընտրանքային կաշառքի ձեւ է, իհարկե, կարելի է ասել, որովհետեւ փետրվարի 7-ին օրենք ընդունեցին, որ բարեգործությունները պետք է սահմանափակել, բայց իրենք բյուջեի միջոցով կենսաթոշակ են ավելացնում: Ես՝ որպես քաղաքական ուժի ներկայացուցիչ, հարցադրում եմ արել, որ Սամվել Կարապետյանը, առանց իշխանություն ունենալու, կարողանում է օրակարգ թելադրել, որովհետեւ դա մեր օրակարգում է»:

Անդրադառնալով նաեւ հավելյալ միջոցներից կենսաթոշակների բարձրացումն ապահովելուն՝ տնտեսագետն ասաց. «Պահուստային ֆոնդն է, որտեղից չնախատեսված ծախսերն են իրականացնում, իսկ ինչ վերաբերում է, որ բյուջեն գերակատարել են, ես միշտ ասում եմ՝ դա հայտնագործություն չէ, դու կարող ես պլանավորել, որ պետք է հավաքագրես X միավոր, դու ես պլանավորողը, բայց այդ X-ը կատարես ավել, ասել՝ գերակատարեցի, դրանք արհեստական ցուցանիշներ են: Եթե իրենք պոտենցիալից պակաս են պլանավորում, այդտեղ գլուխ գովելու բան չկա: Բնականաբար, այդքան հարկերի բարձրացման ֆոնին պետք է գերակատարվի, բա ի՞նչ պետք է արվի: Բյուջեի գերակատարման մասին՝ դա ավելորդ նախադասություն կարելի է համարել, իրենք նախընտրական քայլ են անում»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՋՈՒՐ

ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ 25-ԱՄՅԱԿԸ ՏՈՆԵՑԻՆ ՈՒ ՀԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ, ՈՐ ԱՅՍՈՒՀԵՏ ԸՆԴԱՄԵՆԸ 17 ԺԱՄ ԵՆՔ ՋՈՒՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Վարչապետ Փաշինյանը Ջրային կոմիտեի 25-ամյակի կապակցությամբ՝ փետրվարի 23-ին, մի ներկայանալի կազմով՝ ՀՀ նախագահով, ՍԴ նախագահով, նախարարներով, դիվանագետներով, այցելեց կոմիտե, բոցաշունչ ելույթ ունեցավ ջրի հանդեպ մեր վերաբերմունքի, ջրի արժեքի մասին: «Պետք է փոխենք ջրի նկատմամբ մեր վերաբերմունքը»,- ասաց Փաշինյանը, եւ նրա հետ դժվար է չհամաձայնել, բայց արժե՞ր արդյոք ողջ պետական վերնախավով հավաքվել ու գնալ մի ինչ-որ կոմիտեի գերատեսչական ներքին տոնին, այն նշել հանդիսությամբ, այն դեպքում, երբ շատ ավելի կարեւոր ամսաթվեր ուղղակի անտեսվում են: Օրինակ, բանակի տարեդարձը, Արցախի անկախության տոնը՝ սեպտեմբերի 2-ը, որի կապակցությամբ վաղուց արդեն պետական մակարդակով ոչ մի միջոցառում չի կազմակերպվում, ոչ մի ուղերձ վարչապետի կամ նախագահի կողմից չի հնչում: Դեռ դա էլ ոչինչ: Վարչապետը տոնի կապակցությամբ Ջրային կոմիտեի աշխատողներին պարգեւներ ու շնորհակալագրեր է հանձնել:

Ի՞նչ հաջողություններ է արձանագրել Ջրային կոմիտեն, ո՞ր նվաճումների համար է ներկայանալի կազմով նման այցելության արժանացել: Ջրի կորուստները երկրում ահռելի են: Ոռոգման համակարգում դրանք, 2025 թվականի պաշտոնական տվյալներով, 40-50 տոկոս են: Ինչպեսեւ տարիներ առաջ, մինչ դաշտ հասնելը, ջրի կեսը կորչում է: Հայաստանում բազմաթիվ են ջրազուրկ գյուղերը՝ Կոտայքից մինչեւ Լոռի: Գյուղացիները ջրի համար ճամփա են փակում, ինչպեսեւ տարիներ առաջ: Ջրային ռեսուրսները կառավարվում են վատ, ենթակառուցվածքը մաշված է ու ժանգոտված: Փաշինյանն այս ամենը գիտի: «Այստեղ խնդիրը ոչ թե ռեսուրսն է, այլ՝ ռեսուրսը կառավարելու մեր ընդունակությունը»,- ասում է նա ու կրկին իր սիրելի, լենինյան լուծումն առաջարկում՝ կրթություն, կրթություն, կրթություն: Այս բառը Փաշինյանի բառապաշարում կոդավորված իմաստ ունի: ՀՀ քաղաքացին արդեն իմունիտետ է ձեռք բերել Նիկոլի բերանից դուրս պրծնող այս բառի նկատմամբ:

Եթե Նիկոլն ասում է՝ կրթություն, գիրք, դպրոց, նշանակում է՝ քաղաքացու գործերը շատ վատ են լինելու. դպրոցները փակվելու են, դասագրքերը փչացնելու են: Չէ՞ որ ամեն ինչ քանդելու մտադրություն կա: Օրինակ, Փաշինյանն ասաց, չէ՞, որ աղքատության պատճառն «ավերակ» դպրոցներն են: Այդպես էլ եղավ: Ազգային կրթության խորհուրդն ուսումնասիրեց ու բացահայտեց, որ պետք է 231 դպրոց, որոնք սահմանամերձ ու բարձրլեռնային գոտիներում են, փակվեն:

Այնպես որ, եթե Փաշինյանի բերանից դուրս են գալիս «կրթություն», «դպրոց», «գիրք» բառերը, սա նշանակում է՝ լավ չենք ապրելու: Իսկ եթե նա ասում է «ջրային կրթություն», ուրեմն, ջրերի ոլորտում ոչ մի լավ բան չի լինելու, եւ Ջրային կոմիտեի ծննդյան տարեդարձը նշելու հենց հաջորդ օրը «Վեոլիա ջուր»-ը հաղորդեց, որ մայրաքաղաքի մեծ մասում երկար ամիսներ ընդամենը 17 ժամ են ջուր ունենալու: Այսպես կոչված՝ ջրի հովհարային անջատումներ են սկսում՝ գիշերային ժամերին, մինչդեռ տարիներ շարունակ խոստանում էին նամերձ ու բարձրլեռնային գոտիներում են, փակվեն:

Այնպես որ, եթե Փաշինյանի բերանից դուրս են գալիս «կրթություն», «դպրոց», «գիրք» բառերը, սա նշանակում է՝ լավ չենք ապրելու: Իսկ եթե նա ասում է «ջրային կրթություն», ուրեմն, ջրերի ոլորտում ոչ մի լավ բան չի լինելու, եւ Ջրային կոմիտեի ծննդյան տարեդարձը նշելու հենց հաջորդ օրը «Վեոլիա ջուր»-ը հաղորդեց, որ մայրաքաղաքի մեծ մասում երկար ամիսներ ընդամենը 17 ժամ են ջուր ունենալու: Այսպես կոչված՝ ջրի հովհարային անջատումներ են սկսում՝ գիշերային ժամերին, մինչդեռ տարիներ շարունակ խոստանում էին հանրապետությունով մեկ 24-ժամյա ջրամատակարարում ապահովել:

«Ճգնաժամը մեր մեջ է, էն գյուղատնտեսությունը, որ կա, մենք ոչ մի լավ բան չենք կարող ունենալ, մենք պետք է հասկանանք, որ կաթիլային ոռոգումն ու ինտենսիվ գյուղատնտեսությունն են լուծումը, էսօրվա մեր գյուղատնտեսությունը վնասաբեր է առողջությանը»,- ասում է Նիկոլը: Մեր իմունիտետը մեզ հուշում է, որ շուտով էն խղճուկ վարունգ-լոլիկ-ծիրան-կարտոֆիլն էլ չեն կարողանալու Հայաստանում աճեցնել ու վաճառել: Կասեն՝ հայկականը վնասաբեր է առողջությանը, եկեք ադրբեջանական ու թուրքական բերք ուտենք: Լսենք Փաշինյանի ճառի շարունակությունը. «Գալիս է՝ խնդիրը հանգում է կրթությանը, ու մենք հասկանում ենք, որ էս ոլորտում գիտելիքի ոչ թե պակաս, այլ՝ ճեղք ունենք», «պաշտոնյան պետք է լինի աշխարհի թոփ 100 համալսարանների շրջանավարտ»: Իսկ մենք արդեն գիտենք, որ սա նիկոլական կոդավորված լեզվով նշանակում է, որ տվյալ պաշտոնյան երբեք լավ չի աշխատի, իսկ եթե լավ աշխատի, դուրս կշպրտվի համակարգից, ինչպես սեպտեմբերին կոմիտեի նախագահի պաշտոնից ազատվեց Կարեն Սեդրակյանը: Ինչո՞ւ եկավ, ինչո՞ւ գնաց սույն պաշտոնյան՝ այդպես էլ մնաց անհասկանալի: Ընդամենը 5 ոչ լրիվ ամիս ղեկավարեց համակարգն ու ազատվեց առանց որեւէ բացատրության՝ նիլոլական ձեւով, առանց հանրությանը հաշիվ տալու: Երեւի, որովհետեւ աշխարհի թոփ 100 համալսարանների շրջանավարտ չէր, այլ ավարտել է Երեւանի պետական տնտեսագիտական համալսարանը: Ջրերի կոմիտեի նոր պետը՝ Արամազդ Ղալամքարյանը եւս թոփ 100 համալսարաններից ոչ մեկը չի ավարտել, նա ընդամենը Երեւանի պետական համալսարանի շրջանավարտ է, ավելի հայտնի է իր քաղաքական վերլուծություններով ու հոդվածներով, ինչպես նաեւ՝ ժամանակին Հայ ազգային կոնգրեսի վարչության անդամ էր, հետագայում հեռացել է ՀԱԿ-ից: Նա ոչ մի կապ չունի ջրի հետ, երեւի միակ կապն այն է, որ ջուր է խմել իր կյանքում, բայց խոստանում է, որ առաջիկա տարիներին Սեւանա լճից ջրառը տարեցտարի կկրճատվի, 10 նոր ջրամբարի կառուցում կսկսվի, կավարտվի Կապսի ջրամբարի շինարարությունը, որի ժամկետները վաղուց խախտել են, Եղվարդի ջրամբարը վերջապես նախագիծ կունենա, ջրանցքներ ու խողովակներ կկառուցվեն: Բայց վարչապետը տարին շատ համարեց: «Եթե 25 տարում ոչ մի բան չի փոխվում, 25 տարուց հետո լինելու է ավելի վատ»,- ասաց նա: Ու ՀՀ քաղաքացիները հասկացան՝ երեւի, Ղալամքարյանին Կարեն Սեդրակյանի ճակատագիրն է սպասվում:

Այս ճոխ գերատեսչական տոնակատարության ֆեյսբուքյան նկարների տակ ՀՀ քաղաքացիները, որոնք հականիկոլական իմունիտետ ունեն, իրենց կարծիքներն են գրել: Ահա երկուսը: «Ժողովուրդ ջան, մի շեղվեք հավայի թեմաներով, Հայաստանը տանում են գաղութացման ու կործանման, ով դեռ չի գիտակցում, լսեք, եղեք տեղեկացված»,- գրում է Լիլիթ Գրիգորյանը: Լալա Պողոսյանն էլ «Վեոլիա ջրի» վատ աշխատանքի մասին է հիշատակել. «Ես՝ որպես Հայաստանի շարքային քաղաքացի, կարծում եմ, որ Հայաստանի ջրային կոմիտեն պատշաճ կերպով չի վերահսկում «Վեոլիա ջուր» ընկերության գործունեությունը ջրային ռեսուրսների նկատմամբ, ինչի արդյունքում այդ ընկերությունը հանցավոր անփութությամբ վատնում է երկրի ջրային ռեսուրսները՝ այն նվիրելով թուրքերին»:

Ի՞ՆՉ TIME OUT՝ ԵՍ ԱՐԴԵՆ ՎՃԱՐԵԼ ԵՄ ԻՄ ՎԱՐՁԵՐԸ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գեւորգ Ստեփանյանն ահազանգում է, որ ՔՊ-ական իշխանությունն ընտրակաշառքի եւ հասարակությանը մոլորության մեջ գցելու նոր ձեւեր է գտել: Նա գրել է. «Ընտրություններն են մոտենում !!!

Սիրելի՛ երեւանցիներ, ապրիլի 1-ից Երեւանի ոչ լեգետիմ ու 9% քվե ստացած ՔՊ-ն՝ Ավինյանի գլխավորությամբ, որոշել է «Time Out» վերցնել ու ձեզ որոշ ժամանակ չթալանել: 100% գույքահարկի, աղբահանության, տրանսպորտի, կարմիր գծերի ու տեղական տուրքերի վճարների թանկացումները կփոփոխեն ու կդարձնեն նախկին սակագնին:

Մինչեւ հունիսի 7-ը ՔՊ-ն պատրաստ է ցանկացած քայլի, ստի ու կեղծիքի՝ իշխանությունը պահելու համար, մինչեւ 10 հազար դրամ կենսաթոշակները բարձրացնելու փաստը վկա:

Ստի ու կեղծիքի վերջը ժողովուրդն է որոշելու»:

Գեւորգ Ստեփանյանը, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով իր գրառմանը, հավելում է. «Ընտրակաշառքների տարբեր ձեւեր կան: Բայց դրանք գործածելու հնարավորություն ունի բացառապես ՔՊ կուսակցությունը, իսկ մնացածները, ցանկացած ընդդիմադիր ուժ, եթե համարձակվի մտքում անգամ մտածել նման բանի մասին, ուղղակի կհայտնվի բանտում, քրեական գործերի տեղատարափ կսկսվի: Իշխանությունները հասկացել են, որ այլեւս չեն կարող հասարակության վստահությունը շահել, հիմա էլ որոշել են դիմել այս քայլերին: Մեկ ամիս առաջ ասում էին՝ թոշակառուն ի՞նչ պետք է անի 10 հազար դրամը, հիմա պարզվում է՝ թոշակները բարձրացնում են հենց 10 հազար դրամով: Երեւանցիների գույքահարկը 100 տոկոսով թանկացրել են, տրանսպորտը եւ աղբահանության վճարը թանկացրին, տեղական բոլոր տուրքերը թանկացրին, կարմիր գծերի սակագինը թանկացրին, հիմա էլ ասում են՝ 10 հազար դրամով թոշակը բարձրացնում ենք: Էդ 10 հազարներն ինչքան էլ որ գումարեն, մարդիկ անգամ իրենց գույքահարկը չեն կարողանում վճարել: Աչքփակոցի է, ընտրությունները մոտենում են, իսկ իրենք լավ գիտեն, թե ինչ երգ երգեն: Գոնե հիմա Ավինյանին բզեն-բրթեն, նա լավ է ներվայնանալուց: Հետո, եթե, Աստված մի արասցե, ընտրվեն, նորից էլի ամեն ինչ կթանկացնեն: Ամենուր թանկացումների հիթ շքերթ է: Արգիշտի 1 հասցեն թանկացումների կնքահայրն է: Ստի ու կեղծիքի հիման վրա փորձում են հաջողության հասնել, որոշ շերտերի մոտ այն կարող է աշխատել, բայց, հավատացեք, արդեն ուշ է, մարդիկ ամեն ինչ հասկանում են, իմ գրառման տակ գրում են, որ ընտրություններից հետո եթե վերարտադրվեն, ամեն ինչ տասնապատիկ անգամ թանկացնելու են, մուռը հանեն»:

Ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ **Իզաբելլա Աբգարյանը**, սակայն, կարծում է, որ չի կարող նման բան լինել՝ վարձավճարների սառեցում, քանի որ, նախ, ինքը՝ որպես Երեւանի բնակիչ, կատարել է համապատասխան վճարումները, եւ հետո՝ Տիգրան Ավինյանը եւ ՔՊ-ն չեն կարող այդքան շռայլ գտնվել երեւանցիների հանդեպ. «Մինչ այս պահը պարտքերի զրոյացում տեղի չի ունեցել: Եթե նման բան լիներ, ապա այն հետաքրքիր կլիներ, բայց քանի որ չի եղել նման բան, ես առնվազն չեմ էլ հավատում, որ կլինի նման բան: Անկեղծ ասած, ինձ համար այդ հայտարարությունները շատ տարօրինակ են, քանի որ ես՝ ինքս, իմ վճարումները կատարել եմ, ի դեպ՝ շատերն իրենց վճարումները կատարում են տարեկան կտրվածքով: Օրինակ՝ գույքահարկը վճարում են տարվա վերջ, որպեսզի տուգանքի տակ չմնան: Նշում են՝ ապրիլի 1-ից է լինելու Time Out-ը, ապա ես արդեն իսկ վճարել եմ իմ աղբահանության վճարը: Ինչպես տեսնում եք՝ Երեւանի քաղաքապետարանն այս տարիներին միմիայն աչքի է ընկել ագահությամբ, եւ այսօր ՔՊ-ից հիասթափվածների 70 տոկոսից ավելին հենց Երեւանի քաղաքապետարանի որոշումներով է պայմանավորում հիասթափությունը: Հիմա էլ չեմ կարծում, որ քաղաքացիների համար առանձնապես մտահոգված են: Խոսում են թոշակների բարձրացման մասին: Ուղղակի ծիծաղելի բան է՝ 10 հազար դրամ, ընդ որում՝ ամենացածր թոշակի դեպքում: Որքան թիվը մեծ է, այնքան ավելի քիչ է այն բարձրանալու: Իշխանություն, ընդդիմություն… գլուխ չես հանում ոչ մեկից: Ընդդիմադիրներն էլ այսօր հայտարարեցին, որ իրենց ճնշման շնորհիվ է թոշակը բարձրացել: Այդ մի քանի հազար դրամն ի՞նչ է փոխելու թոշակառուի կյանքում: Բոլորը, կարծես, ընտրություններից առաջ գժվել են, չես հասկանում, թե ինչեր են հայտարարում: Այլ բան է, որ թոշակը բարձրանար 50 տոկոսով, բայց մի քանի հազար դրամն ուղղակի ծիծաղելի է»:

ԲՐՅՈՒՍԵԼ

ԵՄ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՀԱՆԳ ՉԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պարզվում է, որ փետրվարի 13-ին Հայաստանի ԱԳ նախարար աշխատող Արարատ Միրզոյանը Բրյուսել՝ ենթադրաբար Եվրահանձնաժողովին հասցեագրված նամակում խնդրել է Հայաստան արագ արձագանքման խումբ ուղարկել՝ հունիսին 7-ին նախատեսված խորհրդարանական ընտրություններում Ռուսաստանի միջամտությունից խուսափելու համար: Բրյուսելում էլ մեծահոգաբար համաձայնել են՝ «նախ տեղակայել Կրեմլի ապատեղեկատվության դեմ պայքարող «հիբրիդային արագ արձագանքման խումբ», ապա հնարավոր է՝ «Հարավային Կովկասի այս երկրում ավելի մշտական քաղաքացիական առաքելություն»,- տեղեկացնում է իրավիճակին ծանոթ «Ազատություն» ռադիոկայանը: Բնական է, որ Արարատ Միրզոյանը որեւէ նամակ չի էլ գրել Բրյուսել, այդ նամակը նրա փոխարեն գրել են Բրյուսելում, նրա փոխարեն ստորագրել են, գուցե ինքն էլ է այդ նամակի բովանդակության մասին տեղեկացել լրատվամիջոցից: Հայաստանը գտնվում է արտաքին կառավարման տակ, եւ արտաքին կառավարիչները կարող են հարկ չհամարել՝ իրենց տեղական աշխատակիցներին նախօրոք տեղեկացել, թե ինչ են պատրաստվում անել:

Ինչո՞ւ է ԵՄ-ն, այսպես կոչված, «հիբրիդային արագ արձագանքման խումբ» ուղարկում Հայաստան, եւ ինչո՞ւ է այդ խումբն ուղարկելու փաստը հրապարակայնացվում. ԵՄ-ն Հայաստանում ունի մշտական ներկայացուցչություն՝ դեսպանատուն, եւ եթե այդ դեսպանատան աշխատակազմն ընդլայնվեր եւս 20 կամ նույնիսկ 50 հոգով, միեւնույն է, սրա մասին որեւէ մեկը ո՛չ կիմանար, ո՛չ էլ դա առանձնապես կզգացվեր:

Սկսենք առաջին հարցի պատասխանից, թե ինչ իմաստ ունի նման խումբ ուղարկելը: ԵՄ-ում տեսնում են, որ Փաշինյանի, այսպես կոչված, պրոարեւմտյան, պրոեվրոպական ռեժիմը գտնվում է վատ, խայտառակ վատ վիճակում: Վիճակը որեւէ համեմատության եզր չունի ո՛չ 2018 եւ ո՛չ էլ նույնիսկ 2021 թվականի ընտրությունների հետ, երբ ռեժիմը քիչ թե շատ հանրային հենարան ուներ, այլապես նման խումբ կուղարկվեր նաեւ այն ժամանակ: Հանրային աջակցությունը հիմա այն ուժերի կողմն է, որոնք կամ ընդհանրապես, կամ բավարար չափով չեն գտնվում ԵՄ վերահսկողության տակ, ԵՄ-ին եւ նրա ղեկավարությանը չեն համարում իրենց վերադաս եւ ընտրություններում հաղթանակի դեպքում կարող են իրականացնել ոչ թե դրսից թելադրվող, այլ Հայաստանի շահերից բխող քաղաքականություն: ԵՄ-ում նման խնդրի բախվել են ինչպես Վրաստանում, այնպես էլ ԵՄ անդամ որոշ երկրներում՝ Հունգարիա, Սլովակիա: ԵՄ-ն հսկայական միջոցներ եւ ջանքեր է գործադրել՝ 2018թ. Հայաստանում հեղաշրջում կազմակերպելու համար, ինչի մասին վկայում է այդ ժամանակվա նախագահ Սերժ Սարգսյանը, որն ըստ էության հաստատեց, որ հեղաշրջման կառավարման կենտրոնը ԵՄ գրասենյակն էր, իսկ ղեկավարը՝ ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկին, որն էլ Փաշինյանին նշանակել է Հայաստանում վարչապետի պաշտոնին: Հիմա իրենք փորձելու են թույլ չտալ, որ հայ հասարակությունը՝ իր քվեարկությամբ, իրենց նշանակած վարչապետին ազատի պաշտոնից: Ռուսաստանի կողմից իբրեւ թե իրականացվող տեղեկատվական հարձակումներն ընդամենը առիթ կամ պատրվակ են՝ արտաքին կառավարումը բացահայտելու համար: Որեւէ մեկը, այդ թվում՝ Հայաստանի իշխանության ներկայացուցիչները, չեն կարող ասել, թե ինչ տեղեկատվական հարձակում են իրականացնում Ռուսաստանը, այդ երկրի իշխանությունները կամ այնտեղից կառավարվող կառույցները, կամ ինչո՞ւ իրենք, որպես ՀՀ իշխանություն, չեն կարողանում հակազդել այդ հարձակումներին, որ արտաքին օգնության խնդրանքով դիմել են ԵՄ աջակցությանը:

Ինչ վերաբերում է նրան, թե ինչու են ԵՄ-ում որոշել հրապարակայնացնել ընտրական պրոցեսը՝ Հայաստանում խորհրդարանական ընտրությունների կազմակերպումը, Հայաստանում իշխանության ձեւավորումն իրենց ոչ միայն վերահսկողության, այլեւ անմիջական կառավարման տակ վերցնելը, ապա դա միայն մի բացատրություն ունի. ԵՄ-ում այլեւս չեն թաքցնում, որ Հայաստանը գտնվում է իրենց կառավարման տակ, եւ ցանկացած ոտնձգություն, այդ թվում եւ ընդդիմադիր կուսակցությունների կողմից, իրենք դիտարկելու են որպես ոտնձգություն ԵՄ օրինական շահերի դեմ, դրանք դիտարկելու են որպես Կրեմլի կողմից իրականացվող գործունեություն: Ավելի պարզ եթե ասենք, ապա ԵՄ-ն Հայաստանի ընդդիմության գործիչներին ասում է՝ այս իշխանությունը մերն է, եւ մենք որոշել ենք նրանց վերանշանակել, եթե դուք դեմ եք մեր այս որոշմանը, ուրեմն մեր դեմ եք, մենք ձեզ հռչակելու ենք թշնամի, Ռուսաստանի գործակալ՝ դրանից բխող հետեւանքներով:

Արդյո՞ք Հայաստանի ընդդիմությունը պատրաստ է ընդունել այս մարտահրավերը. ըստ ամենայնի՝ այո: Համենայնդեպս, հիմնական ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները ոչ հրապարակային հավաստիացնում են, որ ո՛չ ԵՄ-ն, ո՛չ էլ նրա ղեկավարությունն իրենց համար վերադաս չեն, եւ նրանց ասածն իրենց համար հրահանգ կամ պարտադիր կատարման հրաման չէ, իրենք պայքարելու եւ հասնելու են նոր իշխանության ձեւավորմանը: ԵՄ որոշումը հրահանգ չէ նաեւ Հայաստանի հասարակության համար, որը ոչ միայն պատրաստ է պայքարել Փաշինյանի ռեժիմի դեմ, այլեւ Հայաստանի ինքնիշխանության վերականգնման համար: Եթե ընտրություններից հետո 100 հազար եւ ավելի մարդ դուրս գա փողոց, ո՛չ փաշինյանական ռեժիմը, ո՛չ էլ ԵՄ 20 կամ 30 հոգանոց խումբը չեն կարողանալու դիմադրել համաժողովրդական ճնշմանը եւ ապահովել ռեժիմի վերարտադրությունը: ԵՄ-ն պաշտպանող է՝ թող նախ իրեն պաշտպանի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒՆ ԷԼ ՁԵՎ ԿԱ

Այս տարի ընտրակաշառքները կբաժանեն օրենքով սահմանված կարգով: Գումարները կփոխանցվեն քաղաքացիների բանկային քարտերին, որ «տասովչիկները», հանկարծ, դրա մեջ փող չաշխատեն: Այս նորարարությունն առաջինը կփորձարկվի թոշակառուների վրա: Ապրիլի 1-ից հետո, այսինքն՝ ապրիլի 3-ին կամ 4-ին, նրանք հաճելիորեն կզարմանան, երբ իրենց քարտին նստի մի քիչ ավելի մեծ գումար, քան իրենց խղճուկ կենսաթոշակն է: Այս մասին վարչապետը հստակ է արտահայտվել՝ ասելով, որ ապրիլի 1-ից թոշակները կբարձրանան: Նա, իհարկե, որեւէ կերպ չի ակնարկել, որ ընտրություններից առաջ ընտրակաշառք բաժանելու նոր ձեւ են գտել, բայց մենք էլ հո հավ չե՞նք ու այնքան խելք ունենք, որ հասկանում ենք, թե ինչ է նշանակում ընտրություններից առաջ թոշակների բարձրացումը: Ի դեպ՝ ինչքանո՞վ են բարձրանալու թոշակները, 10, 20, 30 հազարով… Ինքն ասում էր, որ թոշակառուն չի իմանա՝ ինչպես ծախսել հավելյալ 10 հազարը: Մի՞թե հիմա, երբ ընտրությունների շեմին ենք եւ, ի դեմս թոշակառուների, ունենք օդից կախված 600 հազարի չափ քվե, 10 հազարից քիչ են «բարձրացնելու»:

Մեր հարեւան Շմավոնը, օրինակ, մտածում է, որ բարձրացումը կկազմի 10 հազար դրամ, մի այդքան էլ «քեշբեքով» հետ կգա: Այսինքն՝ 20 հազարի հույս ունի եւ ՔՊ-ին քվե չի տա, եթե «բազառը» կանգ առնի 20 հազարից ներքեւ: Չգիտեմ, կապրենք՝ կտեսնենք: Անձամբ ես Շմավոնի չափ լավատես չեմ ու չեմ կարծում, որ «քեշբեքի» տոկոսն ավելացնելուց բացի, հավելյալ 10 հազար դրամ էլ կնստեցնեն քարտիս: Հենց թեկուզ այն, որ համաշխարհային ստախոսը հայտարարել է «ընտրակաշառքով» համեմված թոշակները ապրիլի 1-ից տալու մասին, իմ մեջ լուրջ կասկածներ են առաջացրել: Ինչո՞ւ հատկապես «խաբելու» օրվանից:

Բայց չընկնենք դավադրությունների տեսության բաղերը եւ փորձենք հասկանալ, թե ՀՀ վարչապետը որտեղից է փող ճարել՝ թոշակները բարձրացնելու համար: Մեր բյուջեն այդ հնարավորությունը չունի, պարտքերը խեղդում են՝ տոկոսը հազիվ ենք տալիս, հարկահավաքների շրջանում համատարած կոռուպցիան է մոլեգնում, ներդրումները՝ 0, տնտեսությունը՝ 0, արտահանումը՝ 0, մի կերպ պարգեւավճարներ են բաժանում…Բյուջեն էլ անցած տարվա վերջին է հաստատվել՝ տնտեսագետներն ասում են, որ թոշակների բարձրացում 2026 թվին նախատեսված չէ: Ու հանկարծ՝ թոշակների բարձրացում: Այստեղ է, որ սկսում ես հասկանալ, թե սա ինչ բարձրացում է, թե ով կարող է այդ փողը տված լինել եւ, ամենակարեւորը՝ ինչ նպատակով:

Նարեկ Կարապետյանը նկատում է, որ ՀՀ իշխանություններն այս քայլին գնացել են «Ուժեղ Հայաստանի»՝ թոշակները բարձրացնելու նախընտրական խոստումներից դրդված կամ վախեցած: Բան չունեմ ասելու, դա էլ կա, բայց եթե փող չլիներ, ՀՀ իշխանությունները, ինչ է՝ իրենց մսի՞ց էին պոկելու այդ հավելյալ գումարները: Ուրեմն մի տեղից եկել է, չէ՞, տվել են, չէ՞… Պարզ չէ՞, միթե, որ գնացել, իր «բարեկամների» մոտ ուզվորություն է արել, բացատրել, որ եթե «ընտրակաշառքի» համար փող չտան, ինքը չի կարող վերընտրվել: Դե, նրանք էլ «քցել-բռնել» են, որ էդ փողը պետք է տրվի, քանի որ իրենց համար ավելի ընդունելի ղեկավար, քան Հայաստանի գործող վարչապետն է, չեն գտնելու: Հազիվ թե դա Թրամփը եղած լինի, քանի որ նա այսպիսի մանր-մունր հարցերով չի զբաղվում: Փոխարենը՝ Էրդողանը կամ Ալիեւը սիրով կընդառաջեին… Բա էլ ո՞ր օրվա քիրվաներն են, որ այդ գումարը չտային մի մարդու, որ Թուրքիայի ու Ադրբեջանի համար ավելի շատ բան է արել, քան հենց իրենք՝ Թուրքիայի ու Ադրբեջանի գործող նախագահները:

Հայաստանում կա մոտ 600 հազար թոշակառու: Համարենք, որ նրանցից ընտրության կգնա կեսը՝ 300 հազարը: Այդ թիվը, անշուշտ, բավարար չէ ԱԺ-ում բացարձակ մեծամասնություն ստանալու համար: Հետեւաբար, փող է պետք՝ նաեւ թոշակ չստացողներին շահագրգռելու համար: Ուսուցիչներ, բժիշկներ, զինծառայողներ, ուսանողություն… Այս մարդիկ հո ապուշ չե՞ն, որ առանց հավելյալ աշխատավարձ ու կրթաթոշակ ստանալու ձայն տան ՔՊ-ին: Եվ, ուրեմն, պետք է սպասել, որ վարչապետը նրանց եւս մի գեղեցիկ օր կուրախացնի՝ քարտերին հավելյալ գումարներ նստեցնելով: Դա կարող է լինել «քաղաքացու օրը» կամ, ասենք, մայիսի մեջ մի օր՝ 7-ին, 8-ին՝ ԱԺ-ով իր վարչապետ դառնալու կապակցությամբ: Դեռ ինչե՞ր ենք տեսնելու…

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՅՍՔԱՆ ՇԵՆՔ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ, ԱՅԴՔԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՋՈՒՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ

Երեւանում եւ մարզերում մայիսի 1-ից կսահմանվի ջրամատակարարման 17-ժամյա ռեժիմ՝ հայտնում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ընկերության տեղեկացմամբ՝ սահմանափակումները կվերաբերեն մայրաքաղաքի բոլոր 12 վարչական շրջաններին՝ Կենտրոն, Արաբկիր, Աջափնյակ, Մալաթիա-Սեբաստիա, Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Դավթաշեն, Ավան, Էրեբունի եւ Շենգավիթ, ընդգրկելով բազմաթիվ հասցեներ: Մայիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 16-ը ջուրը կմատակարարվի ամեն օր, ժամը 07:00-24:00-ն՝ ընդհանուր 17 ժամ տեւողությամբ:

Տարվա մյուս ժամանակահատվածում՝ հունվարի 1-ից մինչեւ մայիսի 1-ը եւ սեպտեմբերի 16-ից մինչեւ հունվարի 1-ը, ջրամատակարարումը կգործի շուրջօրյա ռեժիմով: Գերատեսչությունից նաեւ հայտնում են, որ անջատումների ժամանակացույցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ համապատասխան հարթակների եւ ընկերության պաշտոնական կայքի միջոցով:

Չնայած «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն միայն երեկ է բարեհաճել հայտարարել այս մասին, կան վարչական շրջաններ, ինչպես նաեւ՝ մարզեր, որտեղ արդեն վեց ամսից ավելի է, ինչ կեսգիշերից հետո ջրամատակարարումն անջատվում է՝ առանց որեւիցե հստակ պարզաբանման: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է Ջրային կոմիտեի նախկին նախագահ **Ինեսսա Գաբայանի** հետ:

- Ինչո՞ւ է «Վեոլիա ջուր»-ը որոշել նման անակնկալ մատուցել հանրությանը: Տարբեր վարկածներ են հնչում, սակայն ընկերությունը հստակ պարզաբանում չի տալիս: Ըստ Ձեզ՝ ո՞րն է սրա պատճառը: Կա կարծիք, որ Հայաստանն ունի ջրային պաշարների խնդիր:

- Գլոբալ խնդիրները մեկ տարում չեն կարող փոխվել դեպի վատը կամ դեպի լավը: Ջրային ռեսուրսների հետ կապված խնդիրները ես դեռ վաղուց եմ հասարակությանը ներկայացրել: Կոնկրետ այս դեպքի հետ կապված՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն պետք է անպայման պարզաբանում ներկայացնի եւ խոսի կոնկրետ պատճառների մասին: Այժմ ասվում է, որ, օրինակ, գյուղերում 4 ժամ են ջուր մատակարարելու, բայց այստեղ հարց է առաջանում՝ իսկ առաջ ինչպե՞ս էր: Ես գյուղ գիտեմ, որ ընդհանրապես ջրամատակարարում չի ունեցել, հիմա պետք է հասկանանք՝ այս փոփոխությունը, օրինակ, այդ գյուղի համար դրակա՞ն է, թե՞ բացասական: Սրանք հարցեր են, որոնց ամենակոնկրետ պատասխանները պետք է տա «Վեոլիա ջուր»-ը:

- Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ պատճառ կարող է լինել: Օրինակ՝ տեսակետներ կան, որ քանի որ Արցախն այլեւս Ադրբեջանի տիրապետության տակ է, այդ պատճառով էլ ջրի պաշարի լրջագույն խնդիր է նկատվում: Ջրի աղբյուրները նաեւ Արցախի ու Արցախին պատկանող տարածքներում էին:

- Արցախից մենք խմելու ջուր դժվար թե ստացած լինենք: Կոնկրետ այս դեպքը ոչ մի կապ չունի Արցախի կորստի հետ: Ի դեպ, մենք ավելի բարձր ենք ու Արցախի ջրերի հետ ոչ մի կապ չունենք: Էլեկտրաէներգիան, այո, Արցախում փոքր ՀԷԿ-եր կառուցվեցին ու այդպես էլ մնացին այնտեղ: Լուրջ կորուստ էր դա, մի մասը հենց հայերը քանդեցին, մի մասը մնաց Ադրբեջանին, հոսանքի առումով մեծ կորուստներ եղել են՝ Արցախով պայմանավորված:

- Այնուամենայնիվ, Երեւանում երբեք նման խնդիր չի եղել, ջրամատակարարումը գոնե վերջին երկու տասնամյակում եղել է 24-ժամյա:

- Օրինակ՝ մենք Նորքում տեւական ժամանակ է 24-ժամյա ռեժիմով ջուր չունենք: Եթե ինձ եք հարցնում, ապա այս ամենի պատճառը նախ այսքան շինարարություններն են: Այսքան բազմաբնակարան շենք է կառուցվում, այդքան մարդու ինչպե՞ս են ջուր մատակարարելու: 100-130 հազար նոր շենք են կառուցում, դա նշանակում է, որ այդքան էլ ջուր օգտագործող, ջուր խմող ավելանում է: Արդյունքում ծանրաբեռնվե՞ց Հայաստանն այս առումով՝ այո, ծանրաբեռնվեց: Որքա՞ն մարդ է դրսից Հայաստան եկել՝ Ռուսաստանից, Հնդկաստանից, բավականին շատ, սա եւս թողնում է որոշակի ազդեցություն: Այս մարդիկ լրիվ շատ շինարարությունների ֆոնին ինձ մշտապես անհանգստացրել է ջրամատակարարման հարցը: Կարող եմ նշել 3 ուղի, թե ինչպես ծանրաբեռնվածությունը մեղմել: Նոր մագիստրալ խողովակաշարեր պետք է Երեւան մտնեն՝ տարբեր ուղղություններով, օրինակ՝ Ապարանից, Գառնիից եւ այլն: Ես լսել եմ, որ արվում է նման բան, բայց ինքս չեմ տեսել: «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն ասում է, որ կա ջրի 80 տոկոս կորուստ, ես այդ թվին մշտապես դեմ եմ եղել, թեպետ պետությունը հաստատել է այդ թիվը: Կորուստները համակարգելու համար կարող են համակարգերը նորոգել, սա նույնպես հնարավորություն է, որ ջրի քանակն ավելանա: Մյուս տարբերակն էլ ջրամատակարարման փոփոխությունն է:

- Իսկ այսքան տեղումները չե՞ն նպաստում ջրի պաշարին, գոնե՝ ոռոգման:

- Այո, այս տարի տեղումները բավականին շատ էին, պետք է որ տարին բարենպաստ լինի, քանի որ այսքան տեղումներ իսկապես վաղուց չէին եղել: Բայց այստեղ եւս դեմ ենք առնում համակարգի կորուստներին, ունենք ոչ նորմատիվ հողեր, որոնց մասին վաղուց խոսում ենք եւ այլն:

- ՀԷՑ-ին պատժեցին՝ ինչ-ինչ թերացումներ պատճառ բռնելով, ինչո՞ւ է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն արտոնյալի կարգավիճակում:

- Դրանք քաղաքական հարցեր են, չգիտեմ, սակայն իմ ղեկավարման ժամանակ երկու ամսում ահագին ջրագողության դեպքեր բացահայտվեցին, կարծում եմ, որ հիմա էլ արվում են համապատասխան աշխատանքներ:

ԲԱԲՈՒՆ ԵՐԵՎԱՆԻՆ ՆԵՐՔԱՇՈՒՄ Է ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՂՏՈՏ ԽԱՂԻ ՄԵՋ. Ի՞ՆՉ ԱՆԵԼ



Արա ԱԼՈՅԱՆ

Գաղտնիք չէ, եւ այդ մասին բազմիցս գրել ենք, որ Ադրբեջանում օրեցօր սաստկանում է հակառուսական մեդիա-քաղաքական թունավոր արշավը: Պատճառները տարբեր են, բայց գլխավորը, թերեւս, 44-օրյա պատերազմում ալիեւյան ռեժիմի արձանագրած հաջողությունն է ու դրա չընդհատվող էյֆորիան, որին լրացուցիչ ոգեւորություն են հաղորդում Արցախի օկուպացիան եւ բռնի հայաթափումը՝ իրենց պնդմամբ, «վերջ դնելով հակամարտության մեջ Կրեմլի հայանպաստ ազդեցությանն ու տարածաշրջանում նրա կայսրապաշտական խաղերին»:

Բայց հարցն այն է, որ Ադրբեջանում որոշել են Հայաստանին հակառուսական կեղտոտ խաղի մեջ ներքաշել, ավելի ճիշտ՝ «իրենց նախընտրելի Նիկոլ Փաշինյանին», պնդելով, թե Երեւանն ու Բաքուն այլեւս չեն խաղում Կրեմլի կանոններով: «Տարիներ շարունակ Հարավային Կովկասն ապրում է այնպիսի պայմաններում, երբ արտաքին խաղացողները ջանասիրաբար ներկայանում են որպես արբիտրներ, խաղաղապահներ եւ միջնորդներ՝ միաժամանակ կողմերին մղելով որոշումների, որոնք բացառապես օգտակար են իրենց, այլ ոչ թե հակամարտության կողմերի համար: Այս ֆոնին, Բաքվի եւ Երեւանի կողմից անվտանգության եւ ինքնիշխան քաղաքականության իրենց տեսլականն իրականացնելու ցանկացած փորձ անխուսափելիորեն նյարդայնացնում է նրանց, ովքեր սովոր են տարածաշրջանը լռելյայն իրենց ազդեցության գոտի համարել՝ անկախ փոփոխված իրականությունից:

«Այս կառուցվածքում Ռուսաստանը հանդես է գալիս ոչ թե որպես չեզոք դիտորդ կամ ազնիվ միջնորդ, այլ որպես հիբրիդային դիմակայության ակտիվ մասնակից եւ միաժամանակ երկու ճակատով՝ եւ Հայաստանի, եւ Ադրբեջանի դեմ: Սա կարող է պարադոքսալ թվալ միայն նրանց համար, ովքեր շարունակում են մտածել պաշտոնական դաշինքների եւ հնացած ինտեգրացիոն գործընթացների տեսանկյունից»,- գրում է ադրբեջանցի քաղաքական մեկնաբան Յալչին Ալիեւը: Նրա խոսքով, «գործնականում Մոսկվան վաղուց է գործել այլ կերպ. այն չի տարբերակում գործընկերներին եւ հակառակորդներին պաշտոնական հայտարարությունների հիման վրա, այլ գնահատում է նրանց միայն կառավարելիության աստիճանով: Հենց որ կառավարելիությունը նվազում է, ակտիվանում է ծանոթ գործիքների ամբողջությունը, այդ թվում՝ տեղեկատվական հարձակումները եւ անհատականացված զրպարտչական արշավները՝ ազդեցության միջոցներից մեկը»:

Վերլուծաբանը պնդում է նաեւ, որ «Բաքվում եւ Երեւանում տեղի ունեցած դատավարությունները դարձել են այս մոդելի իսկական սթրես-թեստ: Ադրբեջանում Ռուբեն Վարդանյանի դատավարությունը եւ Հայաստանում Սամվել Կարապետյանի դեմ գործը, առաջին հայացքից, վերաբերում են տարբեր իրավական համակարգերի, տարբեր իրավասությունների եւ տարբեր մեղադրանքների: Սակայն Մոսկվայի արձագանքը դրանց նկատմամբ ցավալիորեն նման է եղել, ինչն ինքնին բացահայտում է տեղի ունեցողի իրական բնույթը»: «Երկու դեպքում էլ խնդիրը ոչ այնքան կոնկրետ անձանց պաշտպանության մեջ է, որքան արտաքին ազդեցության մեխանիզմի պաշտպանության մեջ, որը վաղուց սահուն գործել է եւ հանկարծ սկսել է սխալ գործել: Ռուսական քարոզչական մեքենայի արձագանքը երկու դատավարություններին էլ վերջապես հանեց բոլոր հարցերը: Այն ցույց տվեց, թե որքան զգայուն է Մոսկվան Ադրբեջանի եւ Հայաստանի ջանքերի նկատմամբ՝ ազատվելու ռուսական ազդեցությունից եւ վարելու իսկապես անկախ արտաքին քաղաքականություն»,- շեշտում է ադրբեջանցի հրապարակախոսը՝ իրեն իրավունք վերապահելով խոսել նաեւ հայկական կողմի անունից, թեպետ, եթե անկեղծ, փաշինյանական՝ հակառուսական դիրքավորում բռնած իշխանությունը նրան լիուլի տվել է այդ հնարավորությունը:

Ռուսաստանի դեմ թունավոր արտանետումներն արդարացնելու համար նա նաեւ հիշատակել է Պետդումայի ԱՊՀ, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ հարաբերությունների հարցերով հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուլինի արձագանքը Բաքվում Արցախի նախկին պետնախարար, բարերար Ռուբեն Վարդանյանի եւ Երեւանում գործարար, բարերար Սամվել Կարապետյանի դատավարություններին: Իսկ Զատուլինին վաղուց են ատելության թիրախ դարձրել Ադրբեջանում, այն նույն մարդուն, որին, ի դեպ, ոչ պատահական զուգադիպությամբ, անցանկալի անձ է հռչակել նաեւ փաշինյական ռեժիմը: Իսկ ռուս պատգամավորի համոզմամբ, երկու «դատավարությունն էլ բացառապես քաղաքական դրդապատճառներ ունեն, դատավճիռներն ուղղակի հաշվեհարդար են, իսկ պետություններն իրենք՝ անշնորհակալ եւ անխոհեմ»:

Բայց վտանգավորն այն է, որ Բաքու-Անկարա տանդեմն այլեւս կարող է համարվել Երեւան-Բաքու-Անկարա տանդեմ՝ գոնե Ռուսաստանի դեմ արշավի պարագայում՝ հայաստանյան ներկայիս ապազգային ու աղետաբեր իշխանությունների պատճառով, որի շուրթերից հաճախ ենք դեմարշային հռետորաբանություն լսում Ռուսաստանի հասցեին, եւ որը դեռ հավակնում է վերընտրվել առաջիկա խորհրդարանական ընտրություններում: Ուրեմն, եթե խաղ է, ապա հակախաղ էլ կա, եւ, շախմատային լեզվով ասած, պետք է ձիով քայլ առաջ կատարել՝ կանխելու հերթական աղետը:

2022-ից սկսած՝ մշակույթի պալատը նորոգվում է

«Մասնակցային բյուջետավորում-2026» գործընթացի շրջանակներում իրականացվում է «Դիլիջան քաղաքի գրադարանի հիմնանորոգում եւ վերաբացում» նախագիծը: Դիլիջանի համայնքապետի ստեղծած հանձնաժողովը քննարկել է «Մասնակցային բյուջետավորում-2026» գործընթացի շրջանակում ներկայացված մի շարք առաջարկներ եւ առանձնացրել է 3 նախաձեռնություն, որոնք համապատասխանում են սահմանված չափորոշիչներին՝ 1. Դիլիջան քաղաքի կենտրոնական հրապարակի բարեկարգում եւ դիզայներական լուծումներով շատրվանների կառուցում, 2. Դիլիջան քաղաքի Թախտա թաղամասում խաղահրապարակի եւ մարզասարքերի հիմնում, 3. Հուշաղբյուրի կառուցում Հովք գյուղի դպրոցի հարակից տարածքում (գյուղի կենտրոնական հատվածում):

Այդ 3 նախաձեռնությունից 2-ը Դիլիջան քաղաքին է վերաբերում, իսկ համայնքի 6 գյուղերին վերաբերող միայն մեկ նախաձեռնություն է ընտրվել: Փետրվարի 13-ին մեկնարկել է այդ նախաձեռնությունների քվեարկության փուլը: Դիլիջանի համայնքապետարանը հայտնում է, որ «Մասնակցային բյուջետավորում-2026» գործընթացի շրջանակներում ներկայացվել էր 9 նախաձեռնություն: Դրանց մեջ է Վիկտորիա Անդրիասյանի հեղինակած «Դիլիջան քաղաքի գրադարանի հիմնանորոգում եւ վերաբացում» նախագիծը, որի շրջանակում նախատեսվում էր իրականացնել Դիլիջանի գրադարանի շենքի ամբողջական վերանորոգում եւ ենթակառուցվածքների բարելավում՝ նպատակ ունենալով վերականգնել գրադարանի լիարժեք գործունեությունը: Ծրագրի հեղինակը նշել է, որ ներկայում գրադարանը չի գործում, ինչը խոչընդոտում է կրթական, մշակութային եւ տեղեկատվական ծառայությունների մատուցմանը քաղաքի բնակիչներին եւ այցելուներին: Վ. Անդրիասյանը նշել է, որ ծրագրի արդյունքում կբարելավվեն շենքային եւ ներքին պայմանները, կապահովվի կառավարման եւ ընթերցասրահների անվտանգ ու հարմարավետ գործառույթ, ինչպես նաեւ՝ կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ՝ գրադարանի մշտական աշխատանքի եւ ծառայությունների մատուցման համար: Նախաձեռնությունը միտված է քաղաքի կրթական եւ մշակութային կյանքի ակտիվացմանը եւ բնակչության համար գիտելիքի մատչելիության ընդլայնմանը: Մանավանդ՝ «Կրթվելը նորաձեւ է» շարժումն այս իշխանությունների սիրելի նախաձեռնություններից է, եւ անընդհատ խորհուրդ են տալիս՝ գիրք շատ կարդալ:

Բայց Դիլիջանի քաղաքային գրադարանի վերանորոգման նախագիծը չէր կարող իրականացվել «Մասնակցային բյուջետավորում-2026» գործընթացի շրջանակում, քանի որ քաղաքային գրադարանը տեղակայված է Դիլիջանի մշակույթի պալատի շենքում, որի նորոգման սուբվենցիոն ծրագիրը կիսատ է: Մշակույթի պալատի նորոգումը 2022թ. դեկտեմբերին է սկսվել: Այդ սուբվենցիոն ծրագրի արժեքն ավելի քան 283 միլիոն դրամ է, որի 60 տոկոսը Դիլիջան համայնքի ներդրումն է:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ ՄԻՆՉԵՎ 60-ԱԿԱՆՆԵՐՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՀԵՂԻՆԱԿ ԷՐ ՍՍՀՄ-ՈՒՄ

ԹԱՏԵՐ

Հայազգի նշանավոր գրող Վիլյամ Սարոյանը, իհարկե, հայտնի է իր պատմվածքներով: Սակայն գրել է նաեւ վեպեր ու պիեսներ: Ավելին, հենց պիեսների համար է, որ արժանացել է Պուլիտցերյան մրցանակի: Խորհրդային Միության ժամանակներում պետության վերաբերմունքը Սարոյանի նկատմամբ միանշանակ չի եղել: Այն փոփոխվել է ըստ միջազգային քաղաքական դրության եւ գրողի կյանքում տեղ գտած փոփոխությունների: Սարոյանի պիեսները սկսել են բեմականացվել խորհրդային թատրոններում միայն «Հալոցքի» ժամանակներում՝ ամերիկացի այլ դրամատուրգների գործերի հետ միասին: Իսկ մինչ այդ՝ 30-50-ական թվականներին, նա խորհրդային իրականության համար անցանկալի հեղինակ է համարվել: Սարոյանի առաջին պիեսը «Իմ սիրտը լեռներում է»-ն է: Այն գրվել է 1939 թվականին: Վերնագիրը վերցված է շոտլանդացի Ռոբերտ Բյորնսի բանաստեղծության առաջին տողից: Թեեւ պիեսում խոսվում է շոտլանդացիների եւ Շոտլանդիայի մասին, սակայն բոլորին հասկանալի է, որ խոսքը հատկապես Հայաստանի մասին է: Սարոյանը պիեսը գրել է Հայաստան կատարած այցի ազդեցությամբ:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսը հոգեհարազատ պետք է համարվեր սովետական այն ժամանակվա իշխանավորների քիմքին, քանի որ որոշակիորեն պահպանված էր դասակարգային այն պատկերացումների համեմատությամբ, որոնք համապատասխանում էին խորհրդային գաղափարախոսության համար «հավատամք» հանդիսացող շատ սկզբունքների: Այս ամենով հանդերձ, սակայն, Սարոյանի ստեղծագործությունների ժողովածուի մեջ, որը հրատարակվել է այդ ժամանակ, այս պիեսը տեղ չի գտել: Թերեւս պատճառն այն էր, որ ավելի վաղ՝ 36 թվականին, Միացյալ Նահանգներում Սարոյանի հրատարակած ժողովածուի մեջ եղել են նկարագրություններ Խորհրդային Հայաստան կատարած այցից, որտեղ ներկայացված են տիրող աղքատությունն ու ավերը:

Սովետական Միությունում Սարոյանին ենթարկում են «քաղաքական բանադրանքի», եւ երկար տարիներ՝ մինչեւ 60-ականները, նա անցանկալի գրող էր ՍՍՀՄ-ում:

«Հալոցքի» շրջանում խորհրդային իրականություն են բերվում Սարոյան, Միլլեր, Բրեխտ, դե Ֆիլիպո, Գիբսոն, Դյուրենմատ եւ այլ հեղինակներ: Նպաստում է նաեւ այն, որ 1959 թվականին Սարոյանը տեղափոխվում է Եվրոպա, դա աղմկոտ իրադարձություն էր: 1960-ին Սարոյանը գալիս է Հայաստան՝ Երեւան: Այն ժամանակ Երեւանի պետական դրամթատրոնի գեղեկն էր ռեժիսոր Վարդան Աճեմյանը: Նրա հետ Սարոյանին ծանոթացնում է Գուրգեն Մահարին: Սարոյանը մշտապես ներկա է գտնվում թատրոնում. նա սիրել է Աճեմյանի բեմականացումները: Հայկական ԽՍՀ 40-ամյակի պատվին որոշվում է, որ պետք է բեմականացվի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը: Հեղինակն ակտիվորեն մասնակցում է բեմադրման աշխատանքներին: Դերասանական կազմի հետ քննարկում է պիեսը, օգնում՝ ընտրել դերակատարներին, նաեւ՝ պնդում, որ պիեսը լինի մեկ գործողությամբ, առանց անտրակտի: Նա նաեւ իր ազդեցությունն է ունեցել բեմադրական երաժշտական ուղեկցության վրա:

Սարոյանն ու մեծանուն հայ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը մտերիմներ էին: Վերջինս էլ գրում է բեմադրման երաժշտությունը: Երաժշտության մեջ միավորված են շոտլանդական ու հայկական մոտիվները: Դրանով ցույց է տրված երկու ժողովուրդների հոգեւոր հարազատությունը: Բեմադրման պրեմիերան կայանում է 1961 թվականի ապրիլի 15-ին: Սարոյանն արդեն վերադարձած է լինում Միացյալ Նահանգներ եւ չի տեսնում այն: Երեւանյան բեմադրությունը մեծ արձագանք է գտնում եւ արժանանում հիացմունքի: Սարոյանն այն տեսնում է միայն վերականգնված տարբերակով, 76 թվականին՝ Հայաստան իր երրորդ այցելության ժամանակ: Բեմադրությունը երեւանյան բեմին մնում է 20 տարի:



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԻՍԱԳՐԱԳԵՏ ԱՆՏԱՌԱՊԱՀՆԵՐՆ ԷԿՈՊԱՐԵԿՆԵՐ ԵՆ ԴԱՐՁԵԼ

Էկոպարեկային ծառայությունում, հատկապես Տավուշի մարզում, շատ են թափուր պաշտոնները: Նախկին անտառապահների զգալի մասը, որոնք համապատասխան կրթություն չունեն, դարձել են էկոպարեկներ: Սակայն ոչ բարձր աշխատավարձը, կոնֆլիկտային աշխատանքը պատճառ են դարձել, որ Տավուշի մարզում էկոպարեկների տասնյակ հաստիքներ թափուր մնան՝ չհամալրվեն: Էկոպարեկային ծառայությունը Տավուշում էկոպարեկների հաստիքների համալրման մասին հայտնում է. «Էկոպարեկային ծառայության կադրային համալրման բազմափուլ գործընթացը թեւակոխեց իր ամենավճռական՝ հարցազրույցի փուլը, որն ամփոփում է ֆիզիկական պատրաստվածության ստուգումներն ու մասնագիտական գիտելիքները գնահատող մրցութային թեստավորումը: Անցկացված այս փուլը նպատակ ուներ բացահայտել այն թեկնածուներին, ովքեր ունեն ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներ ու պատրաստվածություն, այլեւ տիրապետում են բարձրագույն անձնային որակների եւ էթիկայի՝ հանդիսանալու Ծառայության անբաժանելի մասը: Թափանցիկության սկզբունքի պահպանումը եղել է գործընթացի անկյունաքարը, ապահովելով հավասար հնարավորություններ բոլոր մասնակիցների համար: Հարցազրույցի արդյունքները կլինեն վերջնական գործոնը՝ որոշելու Տավուշի մարզային վարչության թափուր հաստիքները համալրող ապագա էկոպարեկային ծառայողներին»:

Մինչդեռ էկոպարեկային ծառայության ղեկավարներն իրենք մասնագիտական կրթություն չունեն, անտառագետ, բնապահպան չեն: 2025թ. հոկտեմբերի 16-ին շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետ Վլադիմիր Կիրակոսյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Դուք, էկոպարեկային ծառայության շատ պաշտոնյաներ չունեք բնապահպանական, անտառագիտական կրթություն, այդ հանգամանքը չի՞ խանգարում էկոպարեկային ծառայության աշխատանքի արդյունավետությանը»:

Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյանը պատասխանել է. ««Էկոպարեկային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղարը եւ կենտրոնական մարմնի հիմնական աջակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ, եւ վերջիններիս աշխատանքային հարաբերությունները, ինչպես նաեւ՝ ծառայությունում պաշտոնների նշանակվելու պայմանները, ծառայության

պաշտոնի անձնագրի՝ կրթության եւ աշխատանքային ստաժի չափանիշները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ծառայության պետի տեղակալներից մեկին շնորհված է «Ճարտարագետ-անտառագետ»-ի բակալավրի աստիճան՝ «Անտառային ճարտարագիտական գործ» մասնագիտությամբ, եւ «Անտառագետի» մագիստրոսի աստիճան՝ «Անտառ-անտառպարտեզպուրակային տնտեսություն» մասնագիտությամբ»: Ղեկավար պաշտոնների նշանակելու գործը, իհարկե, կատարվում է օրենքի տառին համապատասխան՝ այստեղ խնդիր չկա, սակայն էկոպարեկային ծառայության աշխատանքում առկա բազում խնդիրները նաեւ այդ ծառայության ղեկավարների ոչ մասնագետ լինելու հետեւանք են:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

«ՄԻԱՄԻՏ» ԼՈՌԵՑՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՔՐԵԱԾԻՆ ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Երեւանում՝ Հայոց մայրաքաղաքում, որը պետք է բարոյականության ու կարգուկանոնի օրինակ ծառայի երկրի բոլոր ոստանների համար, օրը ցերեկով, խիտ բնակեցված Աջափնյակ թաղամասում հերթական «ռազբորկան» է տեղի ունեցել: Դարձյալ հայ մարդու արյուն է հեղվել: Ընդհարումներ եղել են միշտ, բայց այս մեկը վեր էր ամեն պատկերացումից՝ դանակահարությամբ, կրակոցներով, մոտ 40 մասնակցով՝ ամենալկտի ձեւով:

Առաջներում գոնե բնակելի թաղամասերից հեռու, ծածուկ վայրերում էին իրար սպանում, հիմա՝ մարդաշատ փողոցում: Եվ սա եզակի դեպք չէ: Կրակոցներով, մահերով ու վիրավորումներով ավարտվող դեպքերի թիվը տարեցտարի ավելանում է: Անցյալ տարի, նախորդ տարվա համեմատ, նման հանցագործությունների աճը շուրջ 40 տոկոս է եղել, 2024-ին եւս, 2023-ի համեմատ, նշանակալի աճ է արձանագրվել: Հարց է ծագում՝ ինչո՞ւ: Հիշենք՝ ով էր բարձր ամբիոններից ահաբեկում մարդկանց՝ «ասֆալտին կփռեմ, պատերով կտամ» բառապաշարով: Երբ երկրի առաջին դեմքը խոսում է բռնության լեզվով, ինչո՞ւ պիտի հետ մնան նրան հետեւող քաղաքացիները, հատկապես՝ նրանք, որոնց կենսակերպն արդեն իսկ կրիմինալ է: Նրանք էլ իրենց հերթին են «ասֆալտին փռում» (երբեմն՝ փռվում), «պատերով տալիս»: Տեսնես, եթե թշնամին հարձակվի, նույն եռանդով դուրս կգա՞ն նրա դեմ: Կասկածում եմ:

Իրավապահ համակարգը հաճախ պահպանում է խոր լռություն: Ակտիվանում են, երբ արդեն ուշ է, երբ մնում է արձանագրություն կազմելը: Մինչդեռ մարդիկ տեսնում են, որ վերջին տարիներին ոստիկանական շարքերը կրկնապատկվել, գուցե եռապատկվել են: Բայց ի՞նչ են անում նրանք: Կանխարգելո՞ւմ են հանցագործությունները: Հեռուստակադրերում տեսանք, թե ինչպես էր առնական տղամարդկանց ոհմակն իրար վրա հարձակվում, իսկ նույն պահին մոտակայքում պարեկային 9 ծառայող այլ հարցով էին զբաղված: Աղմուկին, կրակոցներին՝ զրո արձագանք: Տպավորություն էր, թե քրեական Չիկագոյի մասին ֆիլմ ենք դիտում: Միեւնույն ժամանակ, ոստիկանական ահռելի ուժեր անդուլ հսկում են վարչապետին՝ անգամ խաղաղ պատարագների ժամանակ: Պաշտպանում են նրան ժողովրդից: Բայց դժբախտությունը միայն իրավապահ համակարգը չէ: Եկեք մի հայացք գցենք մեր մայրաքաղաքին: Ո՞ւր է մեր նախկին չքնաղ Երեւանը: Ամենուր անձրեւից հետո սնկերի պես աճած անճաշակ, խառնիճաղանճ շինություններ, իրար գլխի կիտված խանութներ, կրպակներ, աններդաշնակ կառույցներ՝ բարձր ու ցածր, մեծուփոքր, գունազարդ, անգույն: Մայթերին՝ գետնատարած առեւտուր: Ամենուր ժխոր, փոշի, ծուխ: Չես հասկանում՝ այստեղ մարդիկ ապրո՞ւմ են, թե՞ «ինքզինքն» ինքնասպանվում:

Այսօր մայրաքաղաքի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության մոտ 60-65 տոկոսը: Այս ո՞ւր ես գնում, իմ չքնաղ քաղաք: Քաղաք-պետությո՞ւն ես ուզում դառնալ, ինչպես հին հունական պոլիսները: Պատմությունը հուշում է՝ երբ պոլիսներում բնակչությունը չափազանց աճում էր, մարդիկ ստիպված լքում էին իրենց հայրենի քաղաքը, հեռանում հազարավոր կիլոմետրեր եւ նոր գաղութներ հիմնում: Սեւ, Ազովի, Միջերկրական ծովերի ափերին հարյուրավոր քաղաքներ այդպես են առաջացել՝ Օդեսայից մինչեւ Սիրակուզա, իսպանական Սագունդ ու ֆրանսիական Մարսել: Մենք հակառակ ճանապարհով ենք գնում. ծայրագավառներից առվակ առ առվակ հոսում ենք դեպի մայրաքաղաք: Քանի՞ նոր բազմահարկ է վեր խոյանում Երեւանում: Ո՞ւմ համար են դրանք: Մեր գյուղերի ու փոքր քաղաքների բնակիչների համա՞ր: Իսկ մեր գյուղերն ո՞վ պիտի պահի:

Մի հարեւան ունեի՝ ընտանիքով տեղափոխվեց Երեւան: Շուկայում առեւտրով էր զբաղվում, երեք երեխա մեծացնում: Ասաց՝ այստեղ ապրել հնարավոր չէ: Երեւանում, մի շուկայում տեղ վերցրեց, տուն գնեց: Իսկ գյուղի տունը… փլվում է: Մյուս ընկերս տաքսիստ էր: Լոռուց ուղեւորներ տարավ Երեւան եւ այլեւս չվերադարձավ: Պատահաբար հանդիպեցի: Ասաց՝ «Ռայոնում բան չկա, փողերը Երեւանում տո՛ն վերադարձել է մարզ՝ չեն վերադարձել, չեն էլ վերադառնա:

Մինչդեռ պաշտոնապես հայտարարվում է մարզերի համաչափ զարգացման մասին: Բայց իրականությունը հակառակն է՝ դպրոցներ են փակվում գյուղերում: Իսկ դպրոց փակելը նույնն է, ինչ գյուղ փակելը:

Վանաձորի «Լոռի» մարզադաշտից վեր, անտառեզրի 70-ամյա սոճուտում մի քանի տարի առաջ մի քանի եղեւնի կտրեցին: Հանդես եկա մամուլում: Կարծես թե դադարեցրին: Այսօր նոր հնարք են գտել՝ բունը սղոցում են, ծառը մնում է կանգուն, շնչում է, բայց… հազիվ: Բավական է մի թույլ քամի, որ շառաչյունով տապալվի: Հետո ասում են՝ մարդը մեղք չունի, ինքն իրեն ընկավ: Պուրակում արդեն շինանյութ է թափված: Նոր կառույցների նախերգանքն է հնչում: Կընկնեն եղեւնիները: Կընկնի քաղաքի շունչը:

Մեր նյարդերը նույնպես սղոցում են՝ «տապալելու» համար: Մեր երկրի «գլխավոր սղոցողները» սղոցում են, իսկ մենք թույլ ենք տալիս: Երբ բունը ներսից կիսված է, բավական է մի թույլ քամի՝ տապալումը չի ուշանա: Գուցե տարբեր թեմաներ շոշափեցի՝ մեկը մյուսին չառնչվող, բայց կապ կա, կապը մեկն է՝ երբ մայրաքաղաքը դառնում է ուժի, բռնության կենտրոնացման եւ անճաշակության խորհրդանիշ, երբ մարզերը դատարկվում են, երբ եղեւնիները ներսից են սղոցվում, մենք՝ բոլորս ենք ներսից սղոցվում: Հետո զարմանում ենք, թե ինչու են ծառերը տապալվում: Քամի՞ն է մեղավոր, թե՞ մարդը: Թե՞ երկուսը միասին:

Լոռեցին գուցե միամիտ է: Բայց տեսնում է, բարձրաձայնում է: Մնում է՝ լսող լինի:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 26.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՌՈՒՍԱԿԱՆ, ԱՅԼ ՆԱԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Զմեն անգամ, երբ լսում ենք հիբրիդային պատերազմի մասին Նիկոլի ու նիկոլենց խոսույթը, ակամայից չենք կարողանում չմտածել, որ սրանք երբ խոսում են հիբրիդային պատերազմի մասին, ոչ միայն չեն հասկանում, թե ինչի մասին են խոսում, այլ նաեւ չեն հասկանում, թե հիբրիդային պատերազմ ասվածի դեմ ինչպես է պետք պայքարել:

Չեն հասկանում, որովհետեւ, եթե հասկանային, թե ինչի մասին են խոսում եւ ինչպես պետք է դրա դեմ պայքարեն, ապա կհասկանային նաեւ, որ հիբրիդային պատերազմն այն չէ, ինչի դեմ պետք է աշխարհաքաղաքական կենտրոններից մեկի աջակցությամբ պայքարել, այլ այն է, ինչի դեմ պայքարելու համար աշխարհաքաղաքական ուժի կենտրոններից եւ ոչ մեկի աջակցությանը պետք չէ ապավինել:

Պետք չէ ապավինել, որովհետեւ, երբ քո երկրի դեմ աշխարհաքաղաքական ուժի կենտրոններից մեկի սանձազերծած հիբրիդային պատերազմի դեմ պայքարելիս դու ոչ թե քո երկրի ու քո հասարակության դիմադրողության եւ ռեսուրսների, այլ մեկ ուրիշ աշխարհաքաղաքական ուժի կենտրոնի աջակցության վրա ես հույսդ դնում, դրանով արդեն ոչ թե հիբրիդային պատերազմում քեզ դաշնակից, այլ քո դեմ նոր հիբրիդային պատերազմ սանձազերծող հակառակորդ ես ձեռք բերում:

Այս իմաստով, չնայած նրան, որ մենք վաղուց գիտեինք Ռուսաստանից՝ Հայաստանի օրվա իշխանությունների ունեցած վախերի մասին, բայց, այդքանով հանդերձ, չէինք կարող հավատալ, որ միայն Ռուսաստանից ունեցած իրենց վախերի պատճառով նրանք կարող էին իրենց թույլ տալ Հայաստանի արտգործնախարարության վրա այնպիսի ճնշում «բանեցնել», որ վերջինս ստիպված լինի Ռուսաստանի կողմից Հայաստանի դեմ սանձազերծված, այսպես ասած, հիբրիդային պատերազմին հակազդելու համար Եվրամիությունից օգնություն խնդրել:

Դա իրոք զարմանալի էր: Ու զարմանալի էր ոչ միայն այն պատճառով, որ 8 տարի երկիր կառավարող իշխանությունը չի հասկանում, որ երկրի դեմ արտաքին ուժերի կողմից սանձազերծված հիբրիդային պատերազմին պետք է հակազդել ոչ թե եվրոպացիների ունեցած ռեսուրսներով ու հնարավորություններով, այլ սեփական ուժերով ու սեփական հասարակությանը համերաշխ դարձնելով, այլեւ չգիտի, որ այնքան, ինչքան Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ կարող է սանձազերծվել Ռուսաստանի կողմից, ճիշտ այդքան էլ կարող է սանձազերծվել Եվրոպայի կողմից:

Այս իմաստով, մեզ համար իրոք անհասկանալի է, թե այս իշխանություններին ինչու է թվում, թե Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ կարող է սանձազերծել Ռուսաստանը, բայց չի կարող սանձազերծել Եվրոպան կամ, ասենք, եվրոպական մի ինչ-որ երկիր: Այնինչ իրականությունն այն է, որ Հայաստանի դեմ հնարավոր հիբրիդային պատերազմները ոչ միայն ռուսական, այլ նաեւ եվրոպական կարող են լինել, որ դրանք ոչ միայն Ռուսաստանից, այլ նաեւ Եվրոպայից կարող են սանձազերծվել:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am